

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻԾ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՄՈՈՒԱՆԱԼԻՆ

ԿԱՂԱՔՆԻ ԻՍՍԲԵՐ՝ ՊԱՆԴՈՒԻՏ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒԾ

Նորէն հազարաւորներ են մենէ որ այս տարի ալ, այս դարազլուսե կաղերն ալ օտարութեան մէջ կ'անցընեն. — հազարաւորներ որոնք, իրենց յուսախաբութիւններուն հետզհետէ աւելի ծանրացող բեռանը տակ կուրացածակ, իրենց հեռաւոր օէրերն ու կարօտները շաւկած, Յիշատակներու օրուան նաւակատիքին՝ կը յամենան իրենց խորթ տունները դառնալու:

Բոլոր աչքիս առջեւ կը բերեմ արտմական խումբերը մեր եղբայրներուն, — բոլոր անոնք որ վարժութեան ու համակերպութեան անողորմելի խաղաղացումը գտած՝ նորէ ի նոր զարնուածի պէս են այս օրերուն. բոլոր անոնք որոնք երեսը կը խնդայ տարին ի բուն, ու հոգիներն մէկէն ի մէկ կուլայ ահա, յանկարծական բղխումով մը. որ չզոցուած ու չզոցուելիք վէրքի մը արիւնիւր կը զգան դարձեալ, ու տղու մը պէս անզօր են անոր դարձան մը տանելու:

Բոլոր միտակները որ իրենք իրենց մէջ կ'իջնեն, ու հոն այնքան կօկիծ կը գտնեն որ կը տախտապարին կը մնան, ոգորեւու անկարող. ու բոլոր քով քովի եկածները որ իրարու աչքի մէջ կը կարդան նոյն սփոփանքի ծարաւը պաղատողին զօր սչ ոք պիտի կըրնայ յազեցնել: Չեղբերը իրարու կ'երկնան՝ իրարմէ ոյժ առնելու, ու սնունդ չգտած մազկների տունկի մը պէս՝ կը թուլան. կ'իյնան իրենց անզօր խոյանքէն:

Լա՛ւ է որ Հայրենիքէն դուրս ո՛չ մէկ Հայ ճշմարտապէս ուրախ ըլլայ այդ իրեկունը:

Թո՛ղ մէկտեղին խնդութեան սեղանին շուրջը, ու թո՛ղ բարեկամութեան ու եղբայրութեան ընտանիքը կազմեն՝ համախումբ հրճուանքին մէջ իրարու պլլուած. բայց թող միշտ որբերու պէս տեսնեն ինքզինքնին որոնք անհարազատ գգուանքներուն մէջէն կ'անցնին ան-

կրչտում, ու աշուրնին դէպի ետ՝ մայրական ծոցերուն՝ ամէնութիւնը կ'երազեն:

Թո՛ղ երգեն ու պոռան որչափ որ կրնան. բայց թող իրենց ձայնը, որչափ ալ խրոխտահունչ ու համայնապարփակ, թող ճրքեք իրենց ականջներուն մէջ չխափանէ հեռաւոր ու տրտում հծծիւններ, որ յամառօրէն հոն կը բերեն մտերիմ խժրուքը հայրենիքին բաւոր գանգիւններուն որ զիրենք կը կանչեն, ուր օրօրներ պարբերու կը խանուին, շարականներ սիրոյ երգերու, ու խնդութեան աւաններ՝ որոնց հիմակ արուվախեր գէմ կը բռնեն հեծկտալով:

Թո՛ղ գինովեան եթէ կ'ուզեն, հետակօրոյս գղխումներու թեւերուն վրայ թող տան ինքզինքնին տարուիլ մուրական. բայց թող իրենց կուրծանը խորը զգան ծառացումը խիտ ու զծնէ ու անդրզուելի Կիտակցութեան որ, ան, երբեք, թմբիր չո նի ու դաժան պահապանի մը պէս՝ իր աշխարհը ոչ մէկուն հետ կը բաժնէ, ոչ մէկուն թող կուտայ անոր սեմէն ներս սպրդիլ, ու Յիշատակները ու Յոյսերը կը բուծանէ հոն անայլալակ հաւատարմութեամբ:

Ու խրախճանութեան թափին մէջ, թող մոռնան օրուան հոգիքը, կեանքին հանապազօրեայ տաժանքը, բիրտ մտալլկուիմը: Բայց լա՛ւ է որ չմոռնան Անմոռանալին:

* * *

Այն օրը որ կարենանք իրացնէ ուրախ ըլլալ, այն օրը պիտի կարուինք կապէ մը որ մեր գոյութիւնը կը կապէ լազգութեան խարխիսներուն: Ու տն առնեն խեղանքու պէս պիտի ըլլանք՝ Կորուստին անսահման տարածութիւններուն վրայ:

Թող ցան ու տրտմութիւնը մենէ չգատուին աւանդական օրերուն դարձադարձին, ու թող անխափան տիրապետեն մեր էութեան այլքերուն:

Որպէս զի երբոր Յիշատակը, — այսինքն ինչ որ մեր ազգութիւնը կը կազմէ, Պատմութիւնը, Աւանդութիւնները, Հաւատքը, մէկտեղ տարուած տառապանքներն և ուրախութիւնները, մէկտեղ կրուած Յոյսերն ու պատրանքները, — որպէս զի երբոր Յիշատակը գայ մեղմիկ սրտերուն զարնէ, ներսի ձայնը պոռայ միշտ.

— Ներկայ:

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Նոր կեանքի վերջին գեկտեմբեմ 15ի թուովը հրատարակեցինք, Ամերիկայի հայ մամուլէն աննելով, Ուստր գումարուած Համաժողովին վերաբերեալ տեղեկութիւնները. այժմ ստացանք Ժողովին պաշտօնական տեղեկագիրը որմէն քաղուած մը կ'ընենք ուրիշ էջի մը մէջ: Այս յօդուածով կը բննենք Համաժողովին որոշումները որոնք Հայ ազգին ամենաշուրջ ուշադրութիւնը գրաւելու արժանի են:

Ամերիկա հիմակ է. Պոլսոյ տեղը բռնած է Հայաստանի համար: Հայը որ քիչ մը ստակ շահելու դիտարութեամբ իր երկրէն Պոլիս կուգար, այսօր միևնոյն նպատակաւ Ամերիկա կ'երթայ: Հինգ դար Հայաստանի վրայ տիրապետելէ յետոյ թիւրքերը իրենց մայրաքաղաքին մէջ, ըստ մօտաւոր հաշուի, մնայուն բառուն հազար հայ պանդուխտ ունէին միայն. քանի մը տարի բաւական եղած է Ամերիկայի քսան հազար հայ իրեն քաշելու, եւ այս թիւը յարաճման սահմանուած ըլլալ կը թուի զէթ առ այժմ: Երբ համոզուած ենք թէ պանդխտութիւնը մեր երկրին համար անխուսափելի շարիք մըն է, որքան ատեն որ վարչական արդի գրութիւնը կը տիրէ հոն, կ'ընդունինք թէ Հայաստանի հայուն համար նուազ դժբաղդութիւն մըն է առժամապէս Ամերիկա փոխադրուիլ քան թէ Պոլիս: Ու ըսենք նաև՝ Ամերիկա պանդխտութիւն մը, առժամութեան պայմանաւ, իրեն հետ կը բերէ առաւելութիւններ որոնցմէ զրկուած պիտի մնար հայը, իր հայրենի սահմաններուն մէջ անշարժ ապրելով:

Պոլիս Հայաստանցիին համար ստրկացման Եզիպտոսն է, անբարոյացման Գոմորը: Հոն բեռնակիր հայը գրաստ մը չէ: Գրաստը գիշերը հանգիստ ախոռ մը կը գտնէ և ապահով բուտ. զինքը խոշտանգողներուն դէմ հարուած մը արձակելու ազատութիւնը կը վայելէ. ոչ ոք կը մտաբերէ այդ կենդանին բանտել, տանջել, մորթել այն պատճառաւ սր բնազդը զինքը մղած է անիրաւութեան մը դէմ կռուելու: Կենդանաբանութիւնը մեզի չի ծանօթացներ արարած մը որ նիւթակիւն ու բարոյական կեանքերուն մէջ հայ բեռնակիր մը պէս թշուառութեան մարմնացումը ներկայանար: Իսկ սպասուոր, խոհարար, օտապաշի հայաստանցին պարտաւոր է քաջափարձ հանդիսանալ ամէն տեսակ մոլութեանց մէջ, որպէս զի քանի մը ոսկի շահելու գիւրութիւն ունենայ: Ամերիկա՝ հայը ստրկացման և անբարոյացման պարտաւորիչ հարկէն ազատ է: Գործարանի մը մէջ իր աշխա-

տութիւնը կը կատարէ, վարձատրութիւնը կանոնաւորապէս կ'ստանայ, եւ զուխը բարձր կը ճեմէ ինչպէս Ամերիկացի ու Եւրոպացի ամէն բանուոր:

Պոլիս՝ Հայաստանցի հայուն մտքին առջեւ նոր հորիզոն մը չի պարզեր: Այդ քաղքին մէջ «որուն կամուրջէն օրը հարիւր հազար մարդ կ'անցնի բայց երբեք գաղափար մը» Հայաստանցի հայը չի կրնար հանդիսի հանրային կեանքի գաղափարի մը որ զինքը ցնցէ: Պոլիս Հայաստանցի հայը կը տեսնէ այլազան, այլալեզու, այլատարազ մարդերու անհուն բազմութիւն մը, որ ձեռք ձեռքի տուած կը կոփեն, կը կանն ժողովուրդները պրկող անուր շղթաները: Նման բազմամարդ քաղքի մը աղտոտ փողոցներուն մէջ հիւծեալ թշուառի մը, որ ձմրան ցրտուն յանկարծ կը փոխադրուի լեռան մը կատարը, ու հոն տաքուկ մթնոլորտի մէջ մաքուր օդի շնչառութեամբ իր մարմնին կազդուրումը կը զգայ, ու երանութեան հրճուանքով կ'ողորի, նոյն եւ հայը թիւրքիայէն Ամերիկա անցնելով հոն ազատութեան շունչէն իր ամբողջ էութեան վերածնունդը կը զգայ: Եւ ա՛յ պիտի չըզձար վերադառնալ իր հայրենի երկիրը, եթէ սիրոյ կապերը զինքը հոն չկաշկանդէին: Բայց կ'ըզձայ որ այդ ազատութեան հովը իր աշխարհին վրայ ալ փչէ: Եւ ահա կը տեսնենք թէ հայրենիքի ազատագրութեան աշխատելու շարժումը օրէ օր աւելի կը տարածի, կը հզօրանայ Ամերիկայի Հայոց մէջ:

Ստոյգ է սակայն որ Միացեալ-Նահանգներու հայ գաղթականութեան համար տեղական տարրին մէջ հաշիւու վտանգը սպանալից կ'երևի, բայց այդ վտանգը անմիջական չէ: Յետոյ, ամէն անոնք որ հայրենիք վերադառնալու յօժար են, ու ասոնք հայ պանդուխտներու ամենաստուար մեծամասնութիւնը կը կազմեն, այդ վտանգէն ազատ են: Պոլիս Հայոց հոծ թիւ մը պէտք չէ ենթադրել տայ որ այդ գաղթավայրը մեր ցեղին համար պահպանումի անքոյթ ապաստանարան մը եղած ըլլայ, ուսմացման ու բարգաւաճման գրախտ մը: Դարէ մը ի վեր Հայաստանի ամէն կողմերէն Պոլիս գաղթած Հայոց վիճակագրութիւնը եթէ յօրինել հնարաւոր ըլլար, պիտի տեսնուէր թէ թիւրքիոյ մայրաքաղաքը մեր ցեղին համար այնքան ազգակուլ եղած է, որքան Եւրոպական ո՛ր և է քաղաք: Տարբերութեամբ մը սակայն. Պոլիս ազգակուլ չէ միայն, այլ՝ մարդակուլ նաև: Եթէ Պոլիս քնակող ամէն հայ չորսդին դիտէ, պիտի տեսնէ թէ Հայաստանցիներու հիմնած ընտանիքները, որոնք բազմաթիւ անդամներ ունէին, կէս դարու մէջ հետզհետէ փրճացեր ու զոռ փճանալու վրայ են: Համբաւաւոր ընտանիքները եթէ յիշենք պիտի տեսնենք թէ ամէնքն ալ չքացած են կամ չքանալու մօտ:

Հայ գաղթականութեան համար Ամերիկան ազգալուծման ջուրայ մը պիտի ըլլայ, եթէ պանդխտութիւնը գաղթականութեան փոխուի: Բայց հատուակը որ մեր երկ-

րին զժբաղզ վիճակը երկար չի տեսեր, ու հայը հայ-
բենիք կը վերագառնայ: Բայց առ այժմ Ամերիկայի հա-
յերը իբր կազմակերպեալ կանոնաւոր մարմին մը աշ-
խատելու եւ գործելու օգտակարութիւնը ըմբռնած են:

Այս առաջին Համաժողովը որ իր յաջորդները պիտի
ունենայ, հանրային ուշադրութիւնը նախ և առաջ իր կազ-
մակերպութեամբ կը գրաւէ: Քաղաքական ազգայնու-
թեան հետամտող հայ ժողովրդին փափաքած ճշմար-
տապէս Ազգային Ժողովի մը պատկերը կը ներկայացնէ:
Լուսաւորչականն ու Աւետարանականը, Հայր սուրբն ու
Պատուելին իրարու հետ են, վասն զի հայ ազգին շա-
հերը այլ եւս զուտ կրօնական շրջանակի մը մէջ չեն
պարփակուիր: Հայը իբր հայ ազգ ապրիլ կարենալու
համար պէտք է քաղաքական ազգայնութեան բարձրա-
նալու ձգտի այն ամէն միջոցներով զոր իր տրամադ-
րութեանը ներքե կրնայ ունենալ: Կ. Պոլսոյ Բարեգոր-
ծական և Կրթական ընկերութիւնները կազմուեցան իբր
քաղաքական ժողովրդի մը մարմիններ: Ամերիկայի հա-
յերը հիմակիտէական Ազգային Ժողովի մը մանրանկարը
կը զծագրեն:

* * *

Ամէն Ազգային ժողով վարչական կազմակերպութիւն
մը կը ստեղծէ. Ամերիկայի առաջին Համաժողովն ալ
կ'որոշէ «Ամերիկայի Հայոց մէջ կազմել մի Ազգային
Կեդրոնական մարմին, որ իրտունք ունենայ յանուն Ա-
մերիկայի Հայութեան խօսելու եւ գործելու:» Այս ու-
րուշումին գործադրութիւնը զիրացնելու միջոցները Մաս-
նաւոր Յանձնախումբ մը պիտի խորհի, եւ երկրորդ Հա-
մաժողով մըն է որ պիտի գործադրէ իր նախորդին յղա-
ցած զաղափարը:

Կ'ենթադրենք թէ այլ կեդրոնական մարմինը այն
պիտի ըլլայ Ամերիկայի Հայոց համար ինչ որ է Կ.
Պոլսոյ Կեդրոնական վարչութիւնը Թիւրքիոյ Հայոց հա-
մար, ինչպէս որ Համաժողովն ալ կը համապատասխանէ
Կ. Պոլսոյ Ազգային Ժողովին: Սակայն ի՞նչ օրինաւոր
հիմքու վրայ պիտի հաստատուի այդ մարմինը, ի՞նչ ի-
րաւասութիւններ պիտի ունենայ, որմէն պիտի ստանայ
զանոնք, իր որոշումներուն եւ հրամաններուն ի՞նչպէս
պիտի հպատակի ժողովուրդը: Այս հարցումներուն պա-
տասխանները կ'ստանալ կը թուին, բայց ժողովրդին կող-
մէն ազգային շահերու խորին գիտակցութիւնը, և անոր
համեմատ բարի կամեցողութիւն մը, բաւական պիտի
ըլլան ամէն զժողովութիւններ հարթելու:

Առանց վարանելու պէտք է ընդունինք որ Ամերիկայի
հայերը, թէ՛ Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն, թէ՛ Էջմիած-
նէն քաղաքականապէս անկախ պիտի մնան, հետևաբար
իրենց կանոնները եւ օրէնքները մեր երկու կազմակերպ-
եալ և օրինական ու օրինաւոր մեծ հաստատութեանց մե-
կուն վաւերացմանը պիտի չ'ենթարկուին: Եւ այսպիսի

վաւերացում ստանալ նիւթապէս անհնարին է: Թէ Էջ-
միածինը, թէ Պատրիարքարանը պաշտօնապէս իբր զուտ
կրօնական վարչութիւններ կը նկատուին, Լուսաւորչա-
կան Հայոց յատուկ հիմնարկութիւններ, ինչպէս որ
տարբեր զաւանանքներու պատկանող հայեր ալ ունին
իրենց գործերը անօրինակ մարմինները: Ամերիկայի նոր
կազմակերպութիւնը կապէս ազգային ըլլալով, բնականա-
բար ո՛չ Էջմիածինը, ո՛չ Պատրիարքարանը կարող չեն
իրենց թևարկութիւնը տարածել ժողովի մը վրայ որուն ամէն
զաւանանքէ հայեր անխտիր կը մասնակցին:

Անշուշտ այս զժողովութեան առջեւ առնել հնարաւոր
էր եթէ Ամերիկայի վարչութիւնը զուտ կրթական, բա-
րեգործական առաջադրութիւններով հիմնուէր: Պատրի-
արքարանը վաւերացուց եւ իր իրաւասութեան ներքե ա-
ռաւ Կ. Պոլսոյ այն բոլոր ընկերութիւնները որոնք Լու-
սաւորչական, Կաթողիկ, Աւետարանական հայերէ խառն
կազմուած էին: Բայց Ամերիկայի հայերը քաղաքական
խորհուրդներ ալ կը յղանան, և ի նպաստ ազգային զա-
տին քաղաքականապէս ալ պիտի գործեն, ուստի եւ
իրենց հպատակութիւնը Էջմիածնի, կամ Կ. Պոլսոյ Պատ-
րիարքարանին, զիրենց պիտի ջլատէ եւ անգործութեան
պիտի դատապարտէ: Ուրեմն օրինական զօրութիւնը
պէտք է այլուր փնտռել: Այլ «այլուր»ը ժողովրդին
կամքն է:

Ամէն իշխանութիւն ժողովրդէն կը բղխի: «Աստուա-
ծատուր իրաւունք»ի վարդապետութիւնը, որ բռնապե-
տութեանց հիմնաքարն է, շատոնց է որ մենք զայն մոռ-
ցած ենք: Ամերիկայի հայերը իրենց աչքին առջև ունին
Միացեալ — Նահանգներու օրինակը: Ժողովրդին ազատ
կամքովը ընտրուած մարմիններ և պաշտօնատարներ կը
վարեն այդ մեծ պետութիւնը: Իւրաքանչիւր Ամերիկացի
ինքնայոժար կը հպատակի իր ընտրած իշխանութեան,
յարգելով մեծամասնութեան կամքը: Ամերիկայի հայերը
հետեւելով այդ օրինակին կրնան հիմնել իրենց յատուկ
վարչութիւնը: Ու գիտնալու են թէ ուրիշ ո՛ր և է ժողովրդէ
աւելի իրենց համար պարտաւորիչ է ինքնայոժար հպա-
տակութիւն այն իշխանութեան զոր հաստատած են:
Պետութեան մը վարիչները ի հարկին զինուորական զօ-
րութեան կը դիմեն օրէնքին գործադրութեանը համար:
Հայ վարչութիւն մը իր տրամադրութեանը ներքե չ'ունե-
նալով այդ բռնաբարիչ միջոցը, իր գոյութիւնը ընդ բա-
րոյական ուժի մը պիտի կոթնի: Ամերիկաբնակ իւրա-
քանչիւր հայու պարտաճանաչութեան գիտակցութիւնը
պիտի ստեղծէ այն բարոյական զօրութիւնը որ իր ազ-
գային իշխանութեան համար բանակի մը տեղ պիտի
բռնէ: Եւ անշուշտ Ամերիկայի հայերը պիտի ուզեն գործ-
նականապէս հաստատել թէ հայ ժողովուրդը աւելի մեծ
ինքնավարութեան մը արժանի է: Երբ ժողովուրդ մը գի-
տէ միաբանիլ, մեծամասնութեան որոշումներուն հպա-
տակիլ, պարտաճանաչութեան գաղափարը պաշտել, այդ

ժողովուրդը նիւթապէս որքան որ ալ ստրկացած ըլլայ օտարի մը լուծին ներքև, բայց բարոյապէս ազատագրեալ կը համարուի: Առանց բարոյական ազատագրութեան պայմանին նիւթական ազատութեան յոյսը ցնորական երազ մը համարելու է:

* * *

Երբ նկատողութեան կ'անենք Համաժողովին միւս որոշումներն ալ, կ'անդրադառնանք թէ ժողովականները դրական մտքով խորհող հայեր են, շօշափելի օգուտներու կը հետամտին, եւ ոչ թէ բացազանչութեանց: Մերի համար «սկիզբն իմաստութեան, երկիւղ բացազանչութեան» է: Հայ ազգը շատ բան կորսնցուց յոյս գնելով, հաւատք ունենալով «բացազանչութեան» վրայ: Մեր արդի պատմութիւնը օր մը գրողները պիտի ահաբեկին հաստատելով այն բոլոր շարիքները զոր բացազանչող հրապարակագրութիւն մը պատճառեց հայ ազգին: Համաժողովին անդամները հասարակութեան մը ներկայացուցիչը ըլլալով, կրնանք ընդունիլ թէ այդ հասարակութիւնը դրական գործունէութեան անհրաժեշտ կարեւորութիւնը զգացած է:

Կեդրոնական մարմնի մը կազմութեան որոշումէն յետոյ Ժողովը կեդրոնական սնտուկի մը հաստատման պէտքը զգացեր է: Շատ անգամ «գործ և ոչ խօսք» կ'ըսուի մեր մէջ: Դրամարկը մը «գործ»ի առաջին պայմանն է: Այս շատ պարզ ճշմարտութեան վրայ ծանրանալու պէտք չենք տեսներ:

Ժողովին երրորդ որոշումն է «Որբախնամ և այլ բարենպատակ ընկերութեանց միացում և ընդարձակում»: Այս որոշումը շատ բարեգուշակ նշան մըն է, մտքերու ուղղութիւնը ցոյց տուող: Հայկական խնդիրը հանրային մտածութեան զլխաւոր սատարական եղած է, եւ պէտք է որ այսպէս ալ ըլլայ: Ու այս առ ժիւ երևան եկած են կարգ մը անձեր, որոնք պարագաներէն օգտուելով, կը ջանան ազգին բոլոր հոգածութիւնը միայն եւ միմիայն յեղափոխական շարժումին մէջ կեդրոնացնել: Ազգային ազատութեան գատը յըջօրէն խորհողները բնականաբար չեն կրնար այսպիսի մտածութիւն մը ունենալ: Մեր ազատութիւնը եթէ լոկ մեր կամքէն կախում ունեցած ըլլար, անշուշտ երկար ատեն սպասել պիտի չուզէինք, բայց բազմաթիւ դժուարութեանց պիտի յաղթենք մաքառումներով որոնց տեւողութեան ատենը ոչ ոք գուշակել կարող է. տարի մը, տասը, թէ դար մը: Ու այս ժամանակամիջոցին պէտք է որ հայ ազգը ապրի, կրցածին չափ ապահովելով ցեղային պահպանման ամէն պայմանները: Ու հա՛րկ է որ յիշեցնենք այն տարրական ճշմարտութիւնը թէ՛ ցեղը պահպանելու համար պէտք է որ հետզհետէ նոր սերունդներ հասնին: Եւ սակայն կը թուի թէ այս ճշմարտութիւնը կարգ մը հայոց համար կարեւորութեանէ զուրկ է: Ու այդ նոր սերունդները ո՛չ միայն պէտք է հասնին այլ և մեծան, խնամուին, կրթուին. անոնց վրայ աշխուրջ հոգածութեամբ պէտք է հսկենք: Անոնք որ 1890—95ին տասը—տասնըհինգ տարեկան էին քսոթ քսանին եւ քսանըհինգին մէջ են. եւ կուզան ծերացողներուն, մեծողներուն: յոգնողներուն տեղը բռնել: Այս օրուան հինգ—տասը տարեկանները վաղուան ազգն են: Ու աչքը գոցես բսնաս, տասնամեայ չըջանը կը բոլորի:

Այդ հասնող նոր սերունդին մէջ որբերը յատուկ գուրգուրանքի եւ հոգածութեան իրաւունք ունին, ինչպէս հայրենիքի մը պարտականութիւնն է պատերազմի դաշտին վրայ իյնող զինուորներուն որբերը խնամել: Ամերիկայի հայերը ուրեմն ազգին պահպանմանը մեծապէս կը նըպաստեն երբ իրենց հոգածութիւնը կը նուիրեն այն ամէն մարմիններուն որոնք որբերը կը խնամեն, հայութեան զարգացմանն ու բարոյացմանը կ'աջակցին:

Չորրորդ որոշումն է «Արտասահմանի այլ հայ գաղթականութեանց հետ յարաբերութիւն մշակել»: Եւ արգարե ա՛լ ժամանակն է որ արտասահմանի հայ գաղթականութիւնները իրարու հետ միանան և համերաշխ գործունէութեան թուականը ողջունեն: Հայութիւնը հիմակ Եւրոպայի և Ամերիկայի մէջ է միայն որ ազատօրէն խորհելու ու գործելու դիւրութիւնները կը վայելէ: Հայկական գատը Եւրոպայի է և կարևոր խնդիրներէն մին կը մնայ միշտ: Ո՛չ Պատրիարքարանը, ո՛չ Պոլսոյ, ո՛չ Թիւրքիոյ, ո՛չ Ռուսիոյ հայերը կարող են ի նպաստ մեր դատին քաղաքական շարժում մը ընել: Արտասահմանի Հայութեան վրայ կը ծանրանայ քաղաքական աշխարհին առջև Հայաստանի համար աշխատելու պարտականութիւնը: Կազմելով հո՞ծ միութիւն մը, արտասահմանի հայերը ամէն դիւրութիւն պիտի վայելեն շարունակելու համար այն քաղաքական աշխատութիւնները սրունք 1878էն ի վեր աշխարհի ուշադրութիւնը Հայաստանի վրայ հըրաւիրեցին:

Ու յետոյ, ինչո՞ւ կարգ մը ազգային խնդիրներ արտասահմանի Հայոց Ժողովի մը միջոցաւ չի լուծուին: Ինչո՞ւ որբերու խնամակալութիւնը ընդհանուր ազգային պարտականութիւն չի հռչակուի: Ինչո՞ւ արտասահմանի Հայոց երեօփոխական մարմին մը յանուն հայ ազգին ձայն չի բարձրացնէ ընդդէմ Պոլսոյ Պատրիարքարանին, որ ազգային օրէնքը և իրաւունքը կը ջնջէ, ուրտադրում պատրիարքի մը մեղսակցութեամբ: Ամերիկայի Հայոց նախաձեռնութեամբ արտասահմանի Հայոց միջեւ յարաբերութեանց մշակումը պիտի կրնայ մօտաւոր ժամանակի մը մէջ շատ մեծ օգուտներ ունենալ ազգին ամէն խնդիրներուն համար:

Հինգերորդ որոշումով Համաժողովը ուզած է նորութիւն մը ներմուծել մեր ցեղային, կամ թէ ըսենք, մեր արեւելեան բարքերու մնջ: Թուահամարի, վիճակագրու-

թիւնը կ'ազգայնացնէ իրաւունքը ունին, ինչպէս հայրենիքի մը պարտականութիւնն է պատերազմի դաշտին վրայ իյնող զինուորներուն որբերը խնամել: Ամերիկայի հայերը ուրեմն ազգին պահպանմանը մեծապէս կը նըպաստեն երբ իրենց հոգածութիւնը կը նուիրեն այն ամէն մարմիններուն որոնք որբերը կը խնամեն, հայութեան զարգացմանն ու բարոյացմանը կ'աջակցին:

Թեան նորութիւնը: «Ամբրիկայի հայ գաղթականութեան ճշգրիտ թուահամարը անուշ» կուզէ Համաժողովը:

Այն անոնք որ կը հետամտին Եւրոպայի վարչական կարգ կանոններուն, կը տեսնեն վիճակագրութեան ահագին կարեւորութիւնը: Ժողովրդի մը կեանքին հաշուակալութիւնն է այն: Մենք հայերս հինգ դար Պոլիս կենալով, և Հայոց քաղաքացիական վիճակը Պատրիարքարանի մէջ ունենալով հանդերձ, մինչեւ հիմակ չի կրցինք գոնէ մօտաւոր թուահամար մը ունենալ Պոլիս գաղթող, կամ պանդխտող Հայոց: Ամբրիկայի հայերը երբ հիմակ ստուար թիւ մը կը կազմեն, ահա կը ձեռնարկեն այդ վիճակագրոյցին պատրաստութեան: Պատկերի պէս աչքերնուս առջեւ պիտի ունենանք պանդխտող Հայոց թիւը, քաղաքները որոնցմէ եկած են, եւ հետզհետէ անշուշտ այն ամէն մանրամասնութիւնները որոնք Հայ ընկերաբանական գիտութեան պիտի հայթայթեն նախնական բոլոր նիւթերը ուսումնասիրելու համար իւրաքանչիւր հայ գաւառի բարոյական և նիւթական կացութիւնը, որուն հետեւանքն է պանդխտութիւնը:

Վեցերորդ որոշումն է «Յեղափոխական Կուսակցութեանց միութեան եւ համերաշխութեան խնդիրը:» Այս կնճռոտ հարցին վրայ այս էջերուն մէջ ծանրանալ չենք ուզեր:

Համաժողովը իր եօթերորդ որոշումով տնօրիններ է Մարտի և Նիւ-Եորք հայ ներկայացուցիչներ կարգել, ի գիւրութիւն հայ ճամբորդներու: Ահա գործնական միջոց մը վերջ գնելու համար այն բաւոր կեղեքութեան, դժբաղդութիւններուն զոր Հայաստանէն եկող հայերը կը կրեն երբ ոտքերնին կը գնեն օտար հողերու վրայ, որոնց ո՛չ լեզուն գիտեն, ո՛չ բարբերը կը ճանչնան, ո՛չ կանոններն ու օրէնքները ծանօթ են իրենց:

Իսկ Ժողովին տնօրինութեանց շարքը կը փակուի հետեւեալ որոշումով, «Յիշատակագիր մը յղել Մեծ-Պետութեանց:»

Անշուշտ գիտենք թէ պիտի առարկուի որ յիշատակագիրները ո՛ր և է գործնական արդիւնք մը չեն ունենար Հայաստանի վիճակին բարւոքման խնդրին գիրացմանը: Այո՛, այնպէս է. բայց կա՛յ միակ միջոց մը որ ինքնին բաւական ըլլայ Հայկական խնդրին լուծմանը: Ու ո՛չ ապաքէն հայկական խնդիրը Եւրոպայի մատուցուած յիշատակագիրներով սկսաւ ու շարունակուեցաւ: Մենք ներքին զօրեղ կազմակերպութեան որքան սր պէտք ունինք, այնքան ալ եւրոպական աջակցութեան կը կարօտինք: Երբեք իր տրամադրութեան ներքև ունեցած բազմաթիւ միջոցներով կ'աշխատի հայկական խնդիրը ոչնչացնել Եւրոպայի առջեւ, բնական է սր մենք ալ ինչ որ կրնանք ընել ընենք մաքառելու համար Երբեք այդ մեքենայութեանց զէմ: Մուլթանին հնարքներէն մին եղած է միշտ ցոյց տալ թէ Հայ ազգը իր ամբողջութեանը մէջ հայկական խնդիր մը չուզէր ճանչնալ: Ներ-

սէս պատրիարքին ատենը Դուռը շարունակ պետութեանց կը հաղորդէր թէ հայ ազգը համամիտ չէ իր պատրիարքին Հայաստանի բարենորոգումներ պահանջելու համար: Իսկ երբ այդ պահանջումը ժողովուրդը սկսաւ ընել ալ և ալ եղանակներով, ու Պատրիարքները Դրան կողմը հակեցան, այն ատենն ալ օսմանեան իշխանութիւնն ալ սկսաւ յայտարարել թէ պատրիարքը որ իր Ազգը կը ներկայացնէ բնաւ պէտք չի տեսնէ բարենորոգումներու: Այնպէս որ ազգ և պատրիարք միշտ իրարմէ անջատ պահելու քաղաքականութիւն մը կը տիրէ Երբեք: Հիմակ Պատրիարքարանը լուռ է. ո՛չ միայն լուռ է ալ և բոլորովին Երբեք պահանջումներուն առջեւ տեղի տուած է. ուրեմն արտասահմանի Հայոց կը մնայ միաձայն պահանջումով խնդրել միջազգային պաշտօնագիրներու գործադրութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի իրական կեանքը պատկերը ներկայացնել Եւրոպայի: Պէտք չէ որ կարծուի թէ յեղափոխական կուսակցութիւններն են միայն որ Հայկական խնդիր մը բորբոքեալ պահել կուզեն:

Այսպէս ահա Համաժողովը, որուն անգամները հայրենի երկրէն ուղղակի եկած Հայաստանի զաւակներ են, կը պատրաստէ ազգային ծրագիր մը որ իր ամբողջութեանը մէջ յապաւումներու պէտք չունի այլ յաւելումներու, որոնք հետզհետէ պիտի ներմուծուին ապագայ գումարումներուն, ինչպէս Հայ օւսանողներու խնդիր մը, Հրատարակչական ընկերութեան մը կազմութիւնը որոնք այս առաջին գումարման Կարգիցիոյցին մէջ էին ու պիտի անցնին յաջորդ երաստին օրակարգը:

Վստահ ըլլալով որ մեզի հետ ամբողջ հայ ժողովուրդը օրտանց կ'ուրախանայ այսպիսի նախաձեռնութեան մը համար, յուսալիր կը սպասենք ծրագրին աստիճանաբար գործադրութեանը, և յաջորդ Համաժողովին գումարմանը:

Ու արտասահմանի բոլոր հայ գաղթականները, Եգիպտոս թէ Կիպրոս, Պուլկարիա թէ Բուլմանիա, Ֆրանսա թէ Անգլիա, ուր որ ալ ըլլան, եղբայրասիրական գուրգուրանքով պիտի ողջունեն Միացեալ-Նահանգներու Հայոց Ազգային Համաժողովը, եւ պիտի ըզձան կապուիլ անոր հետ:

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍԸ

Շարունակորէն

Դ.

Հիմակ կը մնայ ընթերցողներուն ծանօթացնել «Պատուհաս» խմբի վեց անդամներէն կրտսերագոյնը՝ Ատոմ Բօան տարին զեռ նոր աւարտած՝ աշխօթ, կրակուրոց պատանի մըն էր խմբին Բենիամինը. զպրօցի գրասեղանին վրայ արգէն սկսած էր յեղափոխութիւն երագել: Հնչակ ու Դրօշակ կը բերէր զասարան եւ բռնի կը կարգացնէր ընկերներուն, գասատուններուն, տնտեսին, ժամկոչին ու տէրտէրներուն: Դասերուն մէջ միայն բնագիտութեան եւ տարրագիտութեան կ'աշխատէր, յուսալով որ այդ կերպով պիտի կրնար օր մը պայթուցիկ ուժանակներ պատրաստել: Իր հայրենասիրութիւնը մաքուր, իտէական, անհաշիւ ու խնթ էր, յափշտակեալ կրօնամոլի մի ապերասան հաւատքին պէս: Վարժարանին մէջ սրտազօղի ու սարսափի առարկայ մը դարձած էր, և ամէն օր կը սպասէին որ ոստիկանները գան ու զինքը բռնեն տանին:

— Դուն ալ մէջ պիտի խաղաս, մեր գլուխն ալ փորձանքի պիտի բերես, կ'ըսէր տեղուչը, ի զո՛ր հանդարտեցուցիչ խրատականներ ուղղելով տաքուիս գպրօցականին:

— Այն օրը որ թիւրք մը ձեռք դնէ վրաս, գլուխը կը ջախջախեմ, կը պատասխանէր Ատոմ, ձեռքը գրպանը տանելով և ցոյց տալով ըկվովկերի մը ծայրը:

Ո՛հ այդ ըկվովկերը, ինչ զրկուծներու գինը կը ներկայացնէր: Անիկո իր ցերեկուան կերակուրէն, զրքի ու տետրակի զրամէն, ճամբու ծախքի համար տրուած ստակէն կտրելով յաջողած էր ձեռք ձգել: Ամիսներով առտու իրիկուն՝ չորս ժամ քաշեր էր տունէն գպրօց սեղանը տուն, կարենալ մէկ կողմ դնելու համար պէտք եղած զուժարք: Իրեն այնպէս կուգար որ այն օրը ուր գրպանը հրագէն մը ունենար, ա՛լ Հայաստանի փրկութիւնը ապահովուած էր, ա՛լ պիտի կրնար ուղղակի Երևանը-Բէռլինը երթալ, սուլթանը իր առջեւ կանչել տալ և առաջարկել իր պայմանները, ըկվովկերին բերանը շիտկած «մարդախօշոշ գագանին» քիթին:

Անգամ մը որ իր երագին հասաւ ու իր սիրական զէնքին տիրացաւ, զգաց, աւա՛ղ, թէ չափազանց էին աւորու վրայ գրուած յոյսերը: Սակայն Ատոմ այն տարիքը ունէր ուր պատրանքները յուսախաբութիւններու կը նմանին. իրարու կը յաջորդեն:

— Մէյ մը սա գպրօցէն ելլեմ: այն ատեն կը տես,

նենք, ըսաւ ինքնիրեն:

Վերջին քննութիւնները ողորմելի կերպով անցուց: Խելքը միտքը բոլորովին յեղափոխութեան տուած՝ բնաւ չէր աշխատեր դասերուն, և իր կարգին մէջ ամէնէն զէթիւր ունեցաւ: Տեղուչը սակայն, որ ժամ առաջ ազատիլ կ'ուզէր այդ վտանգաւոր տղուն ձեռքէն, կանչեց գասատունները և քննութեան թիւերը բարեփոխել տուաւ:

— Աղբար, տանք սրտը վկայականը ազատինք ձեռքէն, ըսաւ իր պաշտօնակիցներուն:

Դպրօցը ձգելուն հետեւեալ օրն իսկ Ատոմ, որ զիտէր պարոն Աշոտի զիրքը յեղափոխականներուն մէջ, և անոր բնակած թաղը կը նստէր, ներկայացաւ գասատունին:

— Ինձի ալ պիտի առնես ձեր մէջը, եթէ ոչ հիմակ, աչքիդ առջեւ, սա ատրճանակովս ինքզինքս կը մեղցնեմ, գոչեց ըկվովկերը գրպանէն հանելով:

Աշոտ վարժուած չէր զէնքի մօտիկ զրացնութեան եւ նեղութիւն մը զգաց պողպատի կտորին շողալը տեսնելով պատանիին ձեռքին մէջ:

— Ե՛րագաչեմ գրպանդ զիր անիկա, ըսաւ ձայնով մը զօր ջանաց հանդարտ ցոյց տալ. եթէ լեցան է կրնայ վրտանդ մը պատահիլ:

— Նախ վերջնական պատասխանը տո՛ւր, գոչեց անզուսպ պատանին, որ կ'ուզէր վերջապէս իր զէնքը բանի մը ծառայեցնել:

Այն ատեն գասատուն հանդիսական կերպով մը ըսաւ:

— Պարոն Ատոմ, այս բովակէս սկսեալ անգամ էք Առիւծ թաղի Պատուհաս խմբին ... գրպանիդ զրէք աւորճանակը:

Չէնքը աներեւութացաւ, և նոր յեղափոխականը փաթթութեցաւ Աշոտի վիզը:

Այդ օրէն ա՛լ աջ բազուկը եղած էր խմբագրատին. կ'երթար կուգար, կը վազէր, թերթ կը բաժնէր, թղթատունները նսմակ կը ձգէր, հրահանգներ կը տանէր կը բերէր, վերջապէս ինք կ'ընէր խմբին բոլոր այն գործերը որոնք քիչ շատ վտանգ մը կը ներկայացնէին: Իր եռանդը սակայն ատով չէր բաւականանար. խելքը միտքը աւելի մեծ շրջանակի մը մէջ գործել, աւելի վտանգաւոր բաներ ընել էր:

— Աս տղան փորձանք մը պիտի բերէ գլխերնուս, ամա՛ն աչքդ չորս բաց, կը պաղատէր միշտ Աշոտին Ակորճան աղա, որ յեղափոխական ըլլալով հանդերձ միշտ իռհեմ մնացած էր:

Խմբին միւս անդամները տեսակ մը լրտեսութիւն սկսած էին ընել իրենց խանդավառ անգամին շուրջը, որուն եռուզեռուժ օրէ օր կ'աւելնար եւ մտատանջութիւն պատճառող համեմատութիւններ կ'առնէր:

— Ա՛խ մէյը բանտարկուէի, կը հառաչէր պատանին իր ընկերակիցներուն. Կ'ըք պիտի գայ արդեօք այն

արն ուր ոստիկանները տունս պաշարեն, իս բռնեն, թե-
ւերս շղթաներով կապեն, բանտ տանին, զնտանը նե-
տեն... և մահուան դատապարտեն: Գիտէ՞ք ի՞նչ պիտի
պոռամ, կախաղանին վրայ, շուանը ճիտս անցուցած ա-
տեննին...:

— Սո՛ւս, տղաս, ոտքդ պագնեմ սո՛ւս եղիբ, կ'ա-
ղերսէր խանութպանը աչքերը խոշոր մոլոր չորս կողմ
ժուռ ածելով:

Այժմ որ ընթերցողները բաւական ծանօթացան Պա-
տուհաս խմբի վեց անդամներին հետ, դառնանք Մար-
տիկի տունը ուր, ինչպէս ըսինք, հաւաքուած էին լսելու
համար իրենց ատենապետին, պարոն Աշոտի, կարեւոր
զեկուցումը:

— Ատենանը բացուած է, յայտարարեց այս վերջինը
տեղէն ելլելով և բազմելով սենեակին մէջ տեղը դրուած
տեղանին պատուոյ տեղը, թիկնաթոռի մը վրայ: Ի՞նչ
անգամները տեղաւորուեցան բոլորտիքը:

— Սիրելի ընկերներ, շարունակեց Աշոտ հանդիսա-
կան ձայնով. ձեր բացարձակ գաղտնապահութիւնը եւ
խորին ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն ըսելիքներու
վրայ սրտնք այս արտաքոյ կարգի նստին գումարման
տեղի տուին: Վայրկեանը հասած է ուր վերջապէս պիտի
ցոյց տանք մեր գորութիւնը, և ահեղ պայքարը մղենք
թիրք բոնակալութեան դէմ մեր նպատակին հասնելու
համար: Մեր գործունէութիւնը մինչև հիմա սահմանա-
փակուած էր նախապարտաստական շրջանակի մը մէջ.
Հիմակ կեդրոնը ինքզինքը բաւական զօրեղ կը զգայ վրձ-
ուական՝ հրապարակային գործունէութեան սկսելու: Կոբի
գերագոյն ժամն է որ կը հնչէ, այն ժամը որուն պատ-
րաստութեանը համար այնքան անձնութիւնութեամբ աշխա-
տեցանք ամէնքս, եւ որուն զալուստը անշուշտ օրտաարօփ
և յուսալից հրճուանքով մը պիտի ողջունենք: «Ազատու-
թիւն կամ մահ», այս եղած է մեր վսեմ նշանաբանը, եւ
ամէն ժամանակէ աւելի հիմակ է որ աչքերնիս այդ նշա-
նաբանին յառած պէտք է քայլենք:

Երկիւղածութեամբ լսուած այս նախաբանը տարբեր
տարբեր ազդեցութիւն առաջ բերաւ Պատուհասի անդամ-
ներուն վրայ:

Ջարուհիին գոյնը նեւտեց թեթեւ մը և աննշմարելի դող
մը իր մարմինը սարսուցուց:

Մարտիկ անմիջապէս խորհեցաւ թէ ծախելու ժամը
կը հասնէր. «Նախորդ օրը քսան հազար հատ կը ծախեմ,
քանի մը միջնորդի ձեռքով, որպէս զի աչքի չզարնէ», ո-
րոշեց ինքնիրեն:

Ակորճան աղա, թէև խորապէս յուզուած դասատուին
յայտարարութենէն, սակայն ուրախ էր մտածելով որ թերևս
այդ գերագոյն պայքարին յաղթութեան մրցանակը պիտի
ըլլար իր տղոց պանքային գործը: Ասկէ գատ, իր ան-
կարողութեան եւ վեհերոտութեան կոթնած՝ վտառհօրէն
զիտէր օր այդ կատարուելիք ղէպքերուն մէջ վտանգաւոր

գործօն դեր մը պիտի չտրուէր իրեն:

Ի պրոցի կառավարիչը՝ Պ. Ղուկաս՝ իր սովորական
նաքարատը կրկնեց միտքն ի վար. «Վարդան Մամիկոն-
եանը ողջ ըլլալու էր...»:

Իսկ Ատոմ, որ Աշոտի դէմը նստած, աչքերը խոշոր
խօշոր բացած, անոր ամէն մէկ խօսքը կը լսփէր. ան-
յագ, յարածուն հեշտութեամբ մը, ա՛լ յափշտակութե-
նէն պիտի խենթենար: Գերմարդկային շանքեր կ'ընէր
ինքզինքը զսպելու, իր խանդավառութիւնը սանձելու հա-
մար, որովհետև Աշոտ շատ անգամ սպառնացած էր
իրեն զինքը վտանգաւոր գործերէ հեռու պահել, եթէ ա-
ւելի պաղարիւնութեամբ չվարուէր:

Երիտասարդ դասատուն որ իր նախաբանը ըսելէ ետ-
քը պահ մը լռած էր, սիկարէթ մը վառեց եւ առաջ տա-
րաւ խօսքը.

— Գիտէ՞ք որ կուսակցութեանս Պոլսոյ այժմեան լի-
ազօր ներկայացուցիչն է պարոն Կուլտամեանց. ինքն է
որ յղացած է այն մեծ ծրագիրը զոր պիտի գործադրենք,
և որ արդէն ընդունուած է Կեդրոնին կողմէ: Մինչև
հիմակ գաղտնի պահած էինք զայն մեր ընկերներէն,
բայց այժմ ա՛լ գործադրութեան ժամը մօտեցած է, և մեր
ընկերները իրաւունք ունին ամէն բան գիտնալու, քանի
որ իրենց կեանքը վտանգի պիտի գնեն գործին յաջո-
ղութիւնը ապահովելու համար: Արդ, առանց մանրամաս-
նութեանց մէջ մտնելու և մի առ մի թուելու բոլոր այն
կարգադրութիւնները որոնք մինչև վերջին ժամը պէտք
է ծածուկ մնան, երկու բառով կ'ուզեմ հաղորդել
գաղտնիքը:

Այն գաղտնիքը որ այնքան հանդիսական ու խորհրդ-
դաւոր կերպով կը պատրաստուէր Աշոտ հաղորդելու Պա-
տուհասի անդամներուն, արդէն քիչ շատ գիտէին, ինչ-
պէս կարծեմ գիտեն նաև մեր ընթերցողները: Սակայն
մինչև այս գումարման ժամը դասատուն կիսկատար
ակնարկութիւններով կամ անպաշտօն կերպով խօսած էր
այդ մասին իր ընկերակիցներուն՝ անհատաբար, ամե-
նուն ալ պատուիրելով որ իրարու բան չըսեն, մինչդեռ
հիմակ պաշտօնական զեկուցում մըն էր որ կ'ընէր, եւ
ասոր համար Պատուհասի անդամները ծանօթ ըլլալով
հանդերձ Կուլտամեանցի յղացած հսկայական ծրագրին,
անտոմար յուզումով մտիկ ըրին իրենց ատենապետին խօս-
քերուն:

Աշոտ բացատրեց թէ ինչպէ՞ս առտու մը յանկարծ յե-
ղափոխութիւնը պիտի տիրանար Պոլսոյ, ձեռք անցընելով
անոր բոլոր ռազմական կէտերը և կարմիր դրօշակը ծա-
ծանցնելով Ղալաթայի աշտարակին ծայրը...:

— Դրօշակը պատրաստ է, գոչեց Ատոմ որ ա՛լ չկըր-
ցաւ իր խանդավառութիւնը խղզել:

— Ամէն բան պատրաստ է, պատասխանեց Աշոտ:
Այդ յանդուգն գործը կատարելէ ետքը յեղափոխա-
կանները պիտի շանային իրենց գրաւած դիրքերը պահել:

գոնէ շաբաթ մը: Այդ ժամանակամիջոցը բաւական էր եւրոպական անխուսափելի միջամտութիւնը առաջ բերելու, և վեց պետութեանց մարտանաւներուն ներկայութեամբ կարգադրելու հայկական խնդիրը, զեօսպանախորհրդի մը մէջ:

Ակորճան աղա ուր սմբած՝ հեւ ի հեւ անձկութեամբ մտիկ կ'ընէր Աշոտի խօսքերուն, խոշոր շունչ մը առաւ վեց պետութիւններու նաւատորմին մուտքը ըստ սելով: Դէմքը մէկէն ի մէկ պայծառացաւ, և ապահովցած՝ գոչեց.

— Հա՛, օանկ ըսէ, հիմա խելքս պառկեցաւ, չէ՛ նէ՛ շիտակը միայն Ղալաթայի աշտարակին վրայ դրօշակ տնկելով չեմ կարծեր որ բան մը ըլլայ: Բայց քանի որ ետին վեց տէրութիւններուն նաւերը կայ կ'ըսես կոր, նայէ՛ ատոր ըսելիք շունիմ:

— Գործին զիւանագիտական կամ քաղաքական հանգամանքներուն վրայ խօսիլ աւելորդ է, և մեր իրաւասութենէն բոլորովին դուրս, պատասխանեց Աշոտ. Ի՛նչ կը պահանջուի մենէ այս միջոցիս . . . ատոր վրայ խօսինք:

Աւ խմբապետը բացատրեց թէ կուտամբանցի կարգադրութեամբ որոշուած էր որ, մինչեւ ութը օր, Պոլսոյ մէջ գտնուած խումբերը, ամէն մէկն իր կարողութեան չափով, գումար մը պիտի հաւաքէր ու յանձնէր լիազօր ներկայացուցչին, և թէ Պատուհաս խմբին համար, Աշոտի հաւանութեամբ, որոշուած էր 150 օսկի: Արդ, այս գումարը պէտք էր պատրաստ ըլլար անպատճառ մինչեւ շաբաթ մը:

— Կուտամբանց անձամբ պիտի գայ դրամը առնելու, աւելցուց Աշոտ, և այս առթիւ պիտի հաղորդէ ձեզի վերջնական հրահանգները:

— Հարիւր յիսուն օսկի մեր թաղին համար շատ չէ՛, կ'մկմաց Ակորճան աղա, որուն նաւատորմիներուն առաջ բերած շլացումը տեղի տուաւ այս դրամական հարցին դիմաց:

— Շա՛տ, գոչեց դասատուն, միթէ մեր թաղին մէջ վեց հարուստ չի կա՞ն որոնք կարող ըլլան քսանհինգական օսկի տալ ասանկ բանի մը:

— Տասնըվեց ալ կան, բայց կուտան:

— Եթէ իրենց կամքովը չի տան, բռնի կ'առնենք...

— Ատ ուրիշ:

— Հարկաւ, ամէնէն զիւրիւր այն է, բռնի կ'առնենք. կրկնեց Ատոմ որուն համար բուն միջոցը ամէնէն բռնականն էր:

— Այո՛, այո՛, սպանալիքով ուզելու է, վճռեց Մարտիկ, թող տան էֆէնտիմ...

Չարուհի ևս գանձուի այս սպանական ձեւին յարեցաւ:

— Ես ալ բռնի պահանջելու գաղափարէն եմ, ըսաւ Ղուկաս, մանաւանդ որ Եղիշէն ալ կը պատմէ թէ՛ երբոր

Աւարայրի պատերազմին ժամանակ վարդան Մամիկոնեան . . .

— Ուրեմն միաձայն հաւանութեամբ որոշուած է, վրայ բերաւ Աշոտ, զպրօցի կառավարչին խօսքը կրտրելով:

Յետոյ պատրաստեցին այն ունեւորներու ցանկը որոնցմէ նախ անուշութեամբ՝ յետոյ օպանալիքով պիտի գանձէին դրամը: Որոշուեցաւ որ այդ զժուարին պաշտօնը յանձնուի Աշոտին, Ատոմին և Չարուհիին:

— Ա՛խ, ուր էր թէ մերժէին դրամը տալու, գոչեց Ատոմ գրպանէն թելովէրը հանելով:

(Շարունակելի)

ՆՈՐ ԴԱՐԸ

Քրիստոնեայ ժողովուրդները իրենց բարոյական նոր կեանքին սկզբնաւորութեան քսաներորդ դարը կ'ողջունեն: Մարդկային ցեղերուն մէջէն ազնուագոյններն են որ քրիստոնէական կրօնը ընդունած են: Հայ ազգը մէկն է ասիացի այն սակաւաթիւ ժողովուրդներէն որոնք քրիստոնէական կրօնին յարեցան: Եւ այսօր մենք ալ անշատուելով մեր ասիացի հայրենակիցներէն, որպիսիք են՝ Հնդկները, Չինացիները, եւ իսլամ բազմաթիւ ժողովուրդները, ահա վերածնունդի թուական մը կը տօնենք եւրոպացի և ամերիկացի ազգերուն հետ: Մեր նոր կրօնը մեր ցեղին ազնուութիւնը հաստատող ապացոյցներէն մին համարելու իրաւունքը ունինք: Քաղաքակրթութեան կեդրոններուն կցուած կը մնանք մեր կրօնքովը: Պէտք է այս բարոյական միութիւնը ամրապինդ պահենք մինչեւ այն օրը որ յառաջդիմութեան բնական օրէնքովը քաղաքակիրթ ազգերու մտքերը հետեին նոր ուղղութեան մը, որուն պիտի մասնակցինք և մենք:

Վերջացող դարը, ինչպէս կը յայտարարէինք նախորդ թուով, մեզի ժառանգութիւն մը կը թողու, Գաղափար մը: Հայ ժողովրդին քսաներորդ դարուն ազգային ծրարագիրը պիտի ըլլայ՝ Գաղափարին իրականացումը, ազնուութեամբ այն քաղաքակրթութեան օրուն կը մասնակցինք մեր կրօնքովը:

Տասնեկներորդ դարը մեզի արինի մէջ թողուով վերջացաւ: Հին ճշմարտութիւն մըն է թէ, յեղաշրջում տեղի ունեցող ամէն գաղափար արինի մէջ կը լողացնէ զինքը պաշտողները: Հայը քաղաքական կեանքի յեղաշրջման գաղափարին յարելով բնականաբար արինի օրէնքին խստութեանը պիտի ենթարկուէր: Իրաւ է որ շատ սխցղիւր ազրած ոեցան, ազգը իր խմբողջութեանը

մէջ իմաստուն չգտնուեցաւ, ու ամէն ատեն մեր յօ-
 ժարակամութեամբը չէր որ մենք արիւննիս տուինք:
 Բայց մեր կրօնական կեանքին կոհններուն պատմութիւնն
 ալ շատ սխալումներ կ'արձանագրէ. այն հին պատե-
 րագմներուն մէջ ալ ազգովին միշտ խոհական չենք
 հանդիսացածք ու արիւննիս ալ ամէն ժամանակ մեր հա-
 ճութեամբը չէ որ վազած է. եւ հայ ազգը այսօր սրբ-
 բազդութիւն պիտի համարի ի սէր իր կրօնական գա-
 ղափարին հոսած արեանը համար զղջումի ո՛ր և է ար-
 տայատութիւն: Քսաներորդ դարը վախճանած օրը հայ
 ազգը սրբազոյցութիւն պիտի համարի այս օրուան մեր
 մարտիրոսութեան զէմ ո՛ր և է գատապարտութիւն: Յաղ-
 թանակը կը նուիրագործէ ամէն սխալում:

Հայ ազգը իր կրօնքին պաշտպանութեանը համար
 իսլամին զէմ մղած կոհններուն մէջ յաղթական հա-
 մարուեցաւ, ապահովելով իր կրօնական ազատութիւնը:
 Այդ յաղթանակին օրը նոր վտանգ մը կը սկսէր. Բա-
 ղաքականապէս ստրուկ ժողովուրդ մը երբ կը զաղրի իր
 վրայ տիրապետող ցեղին զէմ ու է զազափարի մը հա-
 մար մաքառել. ա՛յ ոչնչացման շրջանին մէջ մտած է:
 Բաղաքական ստրուկներու համար ամէն յաղթանակ պէտք
 է հանգրուան մը միայն ըլլայ, ուրիշ զէպի նոր հանգրուան
 մը մեկնելու են: Այդ նոր հանգրուանին համար ճամբայ
 ելած ենք: Մեր քաղաքական ազատագրութիւնը այն նը-
 պատակակէտն է որ ժամանելու համար նորանոր մար-
 տրնչումներու սկսանք:

« Գաղափարը կը թուի ըլլալ աշխարհիս էն տկար,
 էն չբռնուող, էն դիւրացունց բանը, սակայն աշխարհիս
 վրայ ինչ որ էն հզօրագոյնը կայ, գաղափարն է այն, եւ
 մարդկային սեռը ամբողջապէս անոր հրամաններուն կը
 հնազանդի: »

Ուրեմն Գաղափարը մեզի հրամանատար ունենալով
 նոր դարուս մէջ հայութեան համար նոր դարազլխի մը
 աւետման վստահութեամբը գործենք:

Մարդկութեան էն ազնիւ ցեղերուն հետ մեր ազ-
 գակցութիւնը թո՛ղ առհասարակեայ մը ըլլայ թէ յաղթա-
 նակներուն էն ազնուականը պիտի տանինք, Ազատութեան
 յաղթանակը:

ՄԵՐ ՆՈՐ
 ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

« ՆԱՐ ԿԵԱՆՔ » ին 1901 յունուար 1ի քիսէն ըս-
 կուեալ բաժանորդ գրուողները պիտի ընդունեն
 1900 ապրիլ 1 և 15ի՝ ու զեկտմ. 1 և 15ի քիսերը
 որոնք կը պարտաւանակեն « Պրոպագանդիստ »ը:

ԱՐՑՈՒՆՔՈՏ ՀԱՅՑ

Ամէն օր չի պատահիր եւրոպական վէպ մը՝ որուն
 զլխաւոր հերօսներէն մին Հայ մը ըլլայ, ու անցքերուն
 զլխաւոր թատերավայրը՝ մեր հայրենի երկիրը:

Այսպիսի վէպ մըն է անգլիացի հեղինակի մը, Պլը-
 ճինի, Լոնտօն հրատարակած մէկ նոր հատորը, « Ար-
 ցունքոտ Հացը » զոր Նոր Կեանքի ընթացողներուն կ'ուզեմ
 ներկայացնել այսօր:

Իրաւ է որ սրտի գոհութեամբ մը չէ որ կ'ընեմ այս
 գործը: Բնա՛ւ պարծենալու պատճառ մը չունինք ընտ-
 րութենէն զոր անգլիացի վիպասանը ըրած է՝ Հայ մը
 առնելով իրր զլխաւոր դերակատար իր երեւակայած մի-
 ջադէպներուն, եւ մեր ցեղին ու մեր բարքերուն համար
 համակրանքի ու հիացման զգացում մը չէ որ կը սնուցանէ
 ան, ընդհակառակը:

Բայց սկիւմ նախ վէպին նիւթը պատմել, քայլ առ
 քայլ հետեւելով հեղինակին շարադասութեանը:

Ա.

Ճոն Ֆրոմ անգլիացի արուեստագէտը իր ասանինը
 տարեկան գեղանի Ֆինէլլա աղջկանը հետ Սըվազէն
 մեկնած է Սամսոն երթալու եւ անկից Անգլիա վերա-
 դառնալու: Ֆրոմ կ. Պոլսէն անցնելով փոքր-Ասիա գա-
 ցած է նկարահանողի մը համար ուրուագծեր պատրաս-
 տելու: Հին հաւաքիչ մըն է ինքը, ամէն հաւաքիչնե-
 րու պէս քիչ մը մենամուլ ու կասկածոտ, ու ամէնէն
 զազանի վրան պահած է յիսուն հազար ոսկիի արժա-
 րութեամբ աղամանդ զօր ամբողջ կեանքին մէջ մէկիկ
 մէկիկ հաւաքած է:

Վէպը սկսելուն՝ Ֆրոմը կը գտնենք իր աղջկանը հետ
 Սամսոնի ճամբուն վրայ: Սըվազի ամբերկեան միտի-
 նարներուն Էրաժեշտի սրտառուչ ողջոյնը տուած, ու
 ճամբայ ելած են զէպի Սամսոն, հետեւինն ունենալով
 յոյն խոհարար մը զօր կ. Պոլսէն բերած են, ու երկու
 զապթիէ: Ճամբորդութիւնը տաժանելի է ծեր արուեստա-
 գէտին համար. կուրծքի հիւանդութիւն մը սպառած է զին-
 քը, և օրէ օր ուժէ կ'իյնայ: Իրիկունը եկած է, բռնա-
 բարձ ջորիները գիտինը ինկած փոռած են՝ յամառ
 անշարժութիւն մը պահելով, զապթիէները ըստ սովորա-
 կանին զացած են ասդին անդին գողութիւն ընելու,
 խոհարարն ալ ս'վ գիտէ ս'ր շան ծակը մտած է:

Ֆրոմ խիտի ստիպուի գիշերը անցընելու ճամբուն
 վրայ քարայրի մը մէջ: Մտատանջութիւնը կը պաշարէ
 զինքը: Գիտէ որ երկիրը աւազակներով լեցուն է: ու կը
 վախնայ, ոչ այնչափ իր անձին, որչափ իր գանձին հա-

մար: Ու Ֆինէլլայի պահ մը հեռանալէն օգտուելով, կը ծոխ հողը կը փորէ բարայրին առջեւ ծառի մը տակ, ու հոն կը թաղէ իր գանձը, որպէս զի գիշերը եթէ յարձակում մը կրեն, ո՛ր է վտանգէ զերծ մնայ իր հարըստութիւնը: Աղջկանն ալ բան մը չըսեր այս մասին, որպէս զի մի գուցէ սարսափէն աւազակներուն յայտնէ գանձին թաքստոցը: Միայն, երբ Ֆինէլլա կը դառնայ կուգայ, Ֆրոմ տենդոտ շարժումով մը անոր թեր կը բռնէ ու կ'ըսէ.

— Կը տեսնե՞ս կոր այս ծառը, Ֆինէլլա: Երբե՛ք չմոռնաս ասոր տեղը:

Յոյն խոհարարը դարձած եկած է: Կերակուրը կը պատրաստուի: Ընթրիքէն յետոյ, հանգիտա: Ֆրոմ հուրքի մէկ քանի գաւաթ կը պարպէ, ու յոգնած դադրած կ'իյնայ քնանալու: Կէս-քուն կէս-արթուն, գիտովցած կ'երագէ:

— Պզտիկ, դեղին մազերով աղջիկ մը կար, Մէրսի Թրէսսը անուն, որ կամուրջին վրայ կը նստէր երբոր ես ձուկ որսալու կ'երթայի, իր սիրուն բոպիկ ոտքերը ջուրին վրայ առկախուի: Ու ինձի խոստացաւ կինս ըլլալ: Մարգարտածաղկէ շղթաներ շինեց ինձի, ու խոստացաւ կինս ըլլալ: Բայց մեծցաւ, ու ես անոր սիրտը ջախջախեցի...

Ու Ֆինէլլայի գրկին մէջ քունը կը ասնի:

Մանկամարդ աղջիկը շատ մտատանջ է: Քիչ մը առջ տեսած է որ իր ըկովիէրը մէջտեղ չկայ: Ու կը կասկածի որ յոյն խոհարարը գացած մատնած ըլլայ զիրենց աւազակներուն: Անձկութիւնը կը արօրէ իր սիրտը, բայց բան մը չի գուրցեր հօրը, որովհետեւ գիտէ որ թելէ մը կախուած է անոր կեանքը, եւ ու է յուզում կրնայ անոր մահաբեր ըլլալ: Կամացուկ մը հօրը դաշունը կ'առնէ անոր վրայէն, ու կը սպասէ:

Ու իրաւ ալ քիչ վերջը աւազակները ներս կը խուսեն: Առոնց պետք, Գարա Օղլու Հայը, յոյն խոհարարին ետին ապաստանած կը յառաջանայ, — մի գուցէ օրէ ըկովիէր մըն ալ գտնուի ճամբորդներուն քով: Երբ ապահով կ'ըլլան թէ ո՛ր է զիմագրութիւն պիտի չչանեն, կը սկսին եղածը շեղածը թալլել, բայց մասնաւոր բան մը փնտռելու փութաջանութեամբ:

Այդ Գարա Օղլուն երեսուն տարեկան գեղեցիկ երիտասարդ մըն է, մինչև աչքերը կեղծ մօրուք մը դրած և ծպտուած: Որդին է վաճառականի մը, և հօրը փափաքով, Օքսֆորտի համալսարանը մէկ քանի տարի անցուցած է ժամանակը եկած ատեն Թիւրքին զէմ կոուելու համար լաւագոյն զենքերով: Քաղաքակրթութեան արտաքին ապիկին տակ ժառանգական ամէն մոլութիւնները և ամէնէն բարբարոս ու վայրագ բնազգները ունի: Թիւրքիա դառնալուն, մէկ կողմէ Թիւրք բռնաւորութեան և միւս կողմէ Հայ Գոմիթէներուն միջև բռնուած, տեսած է որ ուրիշ միջոց չկայ բայց եթէ զէնքը ձեռքը ճամբայ մը բանալ իրեն

առջև կեանքին մէջ: Ու մեծ խելքով օւ ճարտարութեամբ կը կատարէ իր դերը: Ութ տարը հոգիի զուխը անցած, աւազակութեան սխառ է, և իր անունը ահ ու սարսափ կ'ազդէ Թիւրքերուն: Որոնց վայ՛ եթէ իր ձեռքը իյնան, իր միտքն է պէտք եղածին չափ ստակ զիզել, ու օր մը նորէն Անգլիա գտնալ օւ խաղաղ կեանք մը անցընել հոն, մոռնալով զժպչի կեանքը զոր պարագաները բռնադատած են զինքը վարելու:

Հիմկուհիւմ, Հայ Գոմիթէն որուն կապուած է Գարա Օղլու, դրամի պէտք ունի: Իրենց Կ. Պոլսի լրտեսները իրեն լուր կուտան Հայաստան ճամբորդելիք բոլոր անձներուն մասին: Ֆրոմի պէս արուեստագետ մը պնդուցտ փնտռուած որսը չէ, բայց Գոմիթէն իմացած է որ թանկագին աղամանդ մը գնած է ան Կ. Պոլսու խոհարարն ալ, որ իրենց լրտեսն է, օր մը գաղտագողի տեսած է Ֆրոմի գանձը, երբոր ան, ինքզինքը մինակ կարծելով անոր վրայ կը հիանար: Հետեւաբար, Գարա Օղլուն քայլ առ քայլ հետևած է ճամբորդներուն, մինչև որ կրցած է այսպէս թակարդը ձգել զիրենց:

Աւազակները փնտտուքը կը շարունակեն: Գարա Օղլու կը հրամայէ Ֆրոմի վրան զլուխը խուզարկել, ու զողահար ձեռքերով կը յափշտակէ պզտիկ պայուսակ մը, կը բանայ զայն, օւ մէկ քանի ոսկի միայն գտնելով հոն, կատաղութեան աղաղակ մը կ'արձակէ:

— Քարերը, ո՛ր են քարերը, կը զոչէ ընտիր անգլիերէնով մը: Քարերը: Ըսէք, թէ չէ պիտի շարժարենք ձեզի:

Ֆրոմ կը փորձէ խօսիլ: Յանկարծ, զլուխը զէպի ետ կ'իյնայ, ու արեան փրփուր մը շրթունքը կը կարմրցնէ: Մերունին յուզումէն մեռած է:

Ֆինէլլայի խուճապի աղաղակին՝ դուրսէն ուժով ձայն մը կը պատասխանէ յանկարծ, ու Սըվազի ամերիկացի Մարշալ միսիոնարը ըկովիէր ի ձեռին ներս կը խուճէ իր մէկ ընկերոջ հետ: Ֆրոմի ու աղջկանը Սըվազին մեկնելէն ետքը, Մարշալի միտքը կասկած մտած է՝ երբ տեսած է որ զապթիւնները ճամբան «մուրերով» ետ դարձած են, ու ընկերոջ մը հետ փութով եկած է նայելու թէ ամէն բան կարգին է:

Մարշալ կը ճանչնայ Գարա Օղլուն, ու երկուքը մէկ բաւական կ'առնեն կուտան: Հայ աւազակը օակայն շատ ականջ չի կախեր միտին նախատինքներուն: Գիտէ որ ամերիկացի միսիոնարներուն ձեռք զպցնելը կրնայ շատ մը դժուարութիւններ յարուցանել իրէն վերջէն: Մասնաւոր որ իր նպատակը գանձը ձեռք անցընել է: «Ա՛հ, կը մտածէ, ան ծեր աւանակը չէ՛ր կրնար քիչ մըն ալ ապրիլ: Աղամանդները աղջկանը քովը ըլլալու են, որ գանոնք տեղ մը պահած է հարկաւ: Ինչ որ է, ուրիշ ատեն: Հիմակ աղջիկը աչքէ հեռացնելու չէ:

Ու ընկերները ժողովելով կը հեռանայ, մինչ Մարշալ ու ընկերը միսիոնարական խօսքերով կը փայփայեն Ֆինէլ-

լան, ու զայն իրենց հետ կ'անեն նորէն Սըվազի միսիոնարական տունը կը տանին:

Աշխարհի մէջ մինակ մնացած աղջիկ մըն է հիւսիսային, անոք ու չքաւոր: Մօրաքոյր մը միայն ունի, պառուած աղջիկ մը որ Անգլիա կը բնակի, ու միտինարները անոր գրած են Ֆինէլլայի կացութիւնը: Ասի ան Մէրսի թրէտոցն է որուն սիրտը ջախջախած է ատենոց իր հայրը, փոխանակ իրեն՝ իր քրոջը հետ ամուսնանալով:

Վեց շաբաթ ետքը՝ պատասխանը կուգայ: Նամակը բերող ցրուիչը՝ նոյն ինքն Գորա Օղլուն է, որ ճամբան սուրհանգակը զարկած սպաննած ու անոր հագուստները առած ծպտած է: Գորա Օղլու նամակը բացած կարդացած է ու նորէն գոցած:

Միտինարները կը հաւաքուին եկած պատասխանը իմանալու: Նամակը կարդալու կը տրուի Էրաստու Մարշալի, ծերունի միտինարին տղան, քսանմէկ տարեկան կորովի ու ազնիւ երեսասարգ մը, որ, հաճի է ըսել, խանգակած ու խորունկ սիրով մը կը սիրէ հիւսիսային իրենց տունը հիւրընկալուած գեղանի ու անուշ որբուհին:

Նամակը բնաւոր ու զանազան պատուի մը նամակն է: «Ա՛հ, կը գրէ Ֆինէլլայի, ինչպէս հայրերնիդ մեռա՛ն ես զինքը չտանջած այնպէս ինչպէս ինքը տանջեց զիս: Անշուշտ աղքատ մեռաւ, չեմ գործանար ասոր, ու հիւսիսային ալ երբ իմ խնամքիս կը յանձնէ ձեզի: Հիւսիսային ըսեմ ձեզի որ եթէ ելլէք քովս դաք—և ուրիշ ինչ կրնաք ընել—արցունքի հացը պիտի կ'երցնեմ ձեզի: Ես չեմ հաւատար այն մեղմ քրտնախնայութեան որ թշնամիներուն ներքի կը կեղծէ: Ես բոլոր ուժովս կը սիրեմ կամ կ'ատեմ—առ յաւէտ: Կրնաք տունս գալ ապրելու, բայց պէտք է ձեր ապրուստը շահիք ծառայութիւն ընելով: Աս այսպէս է, դուք ընտրեցէք: Կ. Պարոյ անգլիական դեսպանատան ձեռքով ձեր ճամբու ծախքը կը շրջեմ կոր: Չոր ամբրիկացի բարեկամները անշուշտ ամպարիշտ պիտի գտնեն այս նամակս: Ստոյգ աղբիւրէ կը տեղեկանամ թէ իւրաքանչիւր կրօնափոխ Հայ հինգ հարիւր ոսկիի կը նստի իրենց—կամ մանաւանդ զրամը տուող տիւմարներուն: Թէ երբոր հաւատքի կուգայ, Հայը Ամբրիկա կ'երթայ՝ ամբրիկեան լեզուին բուն արտասանութիւնը ձեռք բերելու: Եթէ, Ամբրիկայէն զանաւուն, միտինարները կը վախնան այդ հայէն: Նոյնպէս դեսպանատան ձեռքով Հայու մը արժէքին հինգերորդ մասը կը շրջեմ այդ ամբրիկացի միտինարներուն՝ իրենց կրած ձանձրութեանը համար:»

Նամակին ընթացումը բնականաբար զայրոյթ առաջ կը բերէ ամէնուն վրայ, բացի Ֆինէլլայէն: Կը յիշէ ան իր հօրը վերջին խօսքերը, զիտէ որ հայրը անիրաւած է Միս թրէտոցի, և իր խանդոտ ու գորովալիք սրտին մէջ պարտադանութեան խոյանք մը կը զգայ երթալու այդ մենաւոր պառուին քով իր հօրը յանցանքը

բաւելու, ու խնամքով ու անձնուիրութեամբ քաղցրացընելու անոր կուտակուած դառնութիւնը: Կը մերժէ միտինարներուն առաջարկը իրենց հետ մնալու, և Վրայատարաբէ որ մօրաքրոջը քով պիտի երթայ:

Շաբաթէ մը ճամբայ կ'ելլէ: Էրաստու իրեն պիտի ընկերանայ մինչեւ Սամսոն: Իրենց հետ է նաեւ ամբրիկացի միտինարուհի մը, Միս Ուիլսոն, պառուած հարուստ աղջիկ մը, տղեղ ու պարարտ, զգայնամով ու վիպական հոգիով մը որ զինքը աշխարհիս ամէնէն ծիծաղելի էակը կ'ընէ: Իրենց առաջնորդն է... Գորա Օղլուն, սուրհանգակի պէս ծպտուած:

Ֆինէլլա վերջին անգամ կ'երթայ աղօթելու հօրը գերեզմանին վրայ, միտինարութեան պատիկ գերեզմանատան մէջ, լուսնային տեղոյն պայծառութեանը տակ: Էրաստու հոն կը գտնէ մանկամարդ աղջիկը, ու, խօսքէ խօսք, անոր կը յայտնէ վերջապէս իր սէրը, իր բուն, կրակոտ, աննուածելի սէրը: Կ'ուխտէ մարդ մը ըլլալ, իր կեանքը շինել, ու երթալ օր մը Ֆինէլլան գտնել Անգլիա, անոր նուիրելու համար յաւէտ իր գոյութիւնը: Մանկամարդ աղջիկը յուզումէն կը դողայ: Ու իրենց թարմ շրթունքը իրարու կը հանդիպին՝ առաջին համբոյրի մը սրտառու զաւորութեանը մէջ:

L. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

(Շարունակելի)

ԴԱՏ ՄԸ

Ռուսաստանի հայ եկեղեցիները դատական յաղթանակ մը տարին: Այս մեծ յաջողութիւնը, որ ռուսական վարչութեան ոգին ճշգրտապէս երևան կը բերէ, տարօրէնակ երևոյթ մը պիտի համարուի թիւրքիոյ Հայոց համար: Մեր խեղճուկ եկեղեցիները Հանրային կրթութեան ահեղ պաշտօնատան դէմ դատարանին դիմելով, դատը շահած են: Ահա իրողութիւնը:

Բագուի Հայոց ծխական (թաղային) դպրոցը զետեղուած էր նոյն քաղաքին Ս. Լուսաւորիչ եկեղեցիին բակէն: Այդ կրթական հաստատութիւնը կը փակուի: Հայոց դպրոցներուն ռուսացման որոշումին իբր հետեանք, Բագուի նահանգային ժողովրդական դպրոցներու տեսուչը 1898 յունիս 21-ին կը գրաւէ Հայոց եկեղեցիին բակը զետեղուած նախկին կրթական շէնքերը, ռուսաց ուսումնարանական վարչութիւնը նկատելով որ այդ շէնքերը դպրոցի յատկացուած են, կ'որոշէ թէ 1898ի կայսերական հրովարտակին համեմատ անոնք կրթական նախարարութեան պէտք է յանձնուին: Սակայն

Շամախի Հայոց Կրօնական վարչութիւնը կրթական նախարարութեան այս տնօրինութիւնը կայսերական հրովարտակին հակառակ համարելով, անոր դէմ դատ կը բանայ անցեալ տարի յուլիս 15/28ին, փաստաբան կարգելով Պ. Ս. Յարութիւնեան:

Փաստաբանը հետևեալ իրողութիւնները պարզեց:

Բագուի նահանգապետը 1860ին ատենները, տեղական հայ հոգևոր իշխանութեան խնդիրքին վրայ քաղցրին կեդրոնը մաս մը հող կը յատկացնէ Հայոց Եկեղեցիին և անսր անհրամբշտ եղող շէնքերու կառուցմանը: Եկեղեցին 1871ին շինուելէ յետոյ, նոյն նահանգապետը կը վաւերացնէ նաև բակին շինութեանց յատկագիծն ալ: Էջմիածնի Սինօղին որոշումով այդ բակին մէջ կը զետեղուին առաջնորդարանը, գրադարանը, սպարանը և նախակրթարանը: Այդ շէնքերը ամէնքն ալ եկեղեցական իշխանութեան վարչութեամբ կը մատակարարուին. քաղաքային խորհուրդը զանոնք միշտ իբր հայ եկեղեցիի սեփականութիւն նկատած է, ու ներքին գործերու նախարարութեան հաշիւներուն մէջ ալ նոյն շէնքերը իբր եկեղեցական սեփականութիւն արձանագրուած են:

Այսպէս փաստաբանը յետ հաստատելու թէ այդ շէնքերը եկեղեցիի սեփականութիւններ են, միևնոյն ատեն կը հաստատէ թէ կայսերական հրովարտակը ճիշտ չէ գործադրուած: Այդ հրովարտակին համաձայն պէտք էր որ նախ զպրօքը սուուսնարանական վարչութեան յանձնուէր, իսկ զպրօքի շէնքն ալ յետոյ. արդ՝ զպրօքը 1896ին արդէն փակուած ըլլալով, կարելի չէր զայն 1898ին յանձնել: Եւ երբ յանձնուելիք զպրօք չի կայ, բնականաբար յանձնուելիք շէնք ալ չի կրնար ըլլալ: Ասկէ զատ փակուած զպրօքը արդէն իրեն համար յատուկ շէնք մը չէ ունեցած, այլ զետեղուեր է եկեղեցիին մէկ շէնքին մէջ, ինչպէս կրնար զետեղուիլ վարձու ուրիշ տան մը մէջ, և կրթական նախարարութիւնը անշուշտ չէր կրնար այդ տունն ալ գրաւել:

Ու ասոնցմէ դուրս, փաստաբանը առաջ բերած է օրինական տրամադրութիւն մը, որուն համեմատ եկեղեցիին իրաւունքները խնդրի առարկայ չեն կրնար դառնալ: Պալատէնիայի 1215րդ յօդուածին համեմատ ո՛ր և է շարժական թէ անշարժ գոյք որ կը պատկանի Հայոց եկեղեցիներուն, վանքերուն, ու անոնց իրաւասութեան ներքև գտնուող հաստատութեանց, այդ գոյքը հայ եկեղեցիին ընդհանուր սեփականութիւնը կը համարուի: Ուստի, նըկատելով որ նախկին զպրօքին շէնքը Բագուի եկեղեցիին կը պատկանի, հետեւաբար ամբողջ հայ եկեղեցիին սեփականութիւնը կը համարուի:

Դատարանը այս բացատրութիւնները լսելէ յետոյ, որոշեց.

Ա. Վէճի առարկայ եղող շինութիւնները ճանչնալ իբր Հայոց եկեղեցիի սեփականութիւն, եւ զանոնք ետ առ-

նել Հանրային Կրթութեան պաշտօնատան ձեռքէ:

Բ. Իրաւունք տալ Հայոց եկեղեցիին Հանրային Կրթութեան պաշտօնատունէն պահանջել. շէնքերուն եկամուտները, որոնցմէ զրկուած մնացեր է եկեղեցին:

Գ. Կրթական նախարարութիւնը իբր դատական ծախք 425 ռուպլի և 56 կոպէկ (մօտ 40 օոկի) վճարէ Հայոց եկեղեցիին:

Նոյն փաստաբանը պաշտպանեց և նաև Աստրախանի թեմին պատկանող Թեմերեանշուրայի եկեղեցիին շէնքերուն դատը, որ Բագուի խնդրին յար և նման է եղեր. այս դատն ալ շահած է:

ՊԱԼԱՏԱՆԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Պալատեան թերակղզին ո՛ր և է ժամանակէ աւելի հիմակ կը գրաւէ Եւրոպայի ուշադրութիւնը: Վիեննայէն թաշտգին զարնուած հեռագիր մը կ'ազդարարէ թէ «Մանրաշափը Պալատեաններուն վրայ այս տարի աւելի վար է: Փոթորիկը զոր զուշակել կուտայ, կրնայ անգամ մը եւս անցնիլ, առանց պայթումի, բայց աղէկ կ'ըլլայ աչքէ չվրիպել ամպերու կուտակումը»:

Մակեդոնիան ասպարկզն է ուր մեծ ու պզտիկ պետութիւնները քաղաքական ճակատամարտներ մղելու կը պատրաստուին, Արեւելեան Եւրոպայի խաղաղութեանը սպառնալիքով: Ընդդիմադարձ ճամբարները արդէն կը կազմուին: Մէկ կողմը՝ Սլաւեան մեծ ընտանիքին պատկանողները—Պուլկարիա, Սերպիա, Գարատաղ. միւս կողմը՝ «ամենայն ազգք և ազինք»—Րումանիա, Յուստան, Թիւրքիա: Առաջինները Ռուսիոյ յենած. միւսները՝ իրենց շահերը աւստրիականներուն հետ համերաշխ կը գտնեն, դէթ առ այժմ:

Յունաստանի և Րումանիոյ միջև կնքուած առևտրական դաշնագիրը ո՛չ միայն կը ջնջէ նախկին անհամաձայնութեանց վերջին հետքերը, այլ և հիմ կը դնէ քաղաքական աւելի սերտ յարաբերութեանց: Թէ Վիեննա, թէ Պուլիա հաշտ աչքով կը դիտուի յոյն եւ Րումանական մերձեցումը, որ պետութեանց նորանոր համախմբումներու կ'առաջնորդէ: Եթէ ստուգութիւն մըն ալ չէ բայց ստուգութեան մօտեցող հուանականութիւն մըն է որ Յունաստան եւ Րումանիա թիւրքիոյ հետ նիզակակցութիւն կազմելու վրայ են, Աստրիոյ աջակցութեամբ: Ասոնց դէմ կը կանգնի Պուլկարիա—Սերպիա—Գարատաղ դաշնակցութեան մը սպառնալիքը: Ռուսիա այս երեք պետութիւնները համաձայնեցնելու կը հետամտի: Յաջողութիւնը [թէպէտ՝ եւ զեռ կատարեալ չէ բայց կը տես-

նուի թէ Սերպիա եւ Պուլկարիա ոուսական թելադրու-
թեանց անսալու սրամաղիբ են: Ուշագրաւ իրողութիւն
մը համարուեցաւ այն համակարար ընդունելութիւնը
զոր Ֆերտինանտ իշխանը գտաւ Սերպիայ մէջ, երբ Գեր-
մանիայէն Պուլկարիա կը վերադառնար վերջերս: Ալեկ-
սանդր թագաւորը եւ Յըուրչինայի պատգամաւորութիւն
մը մինչեւ Նիշ գացին, ողջունելու համար Ֆերտինանտ
իշխանը, որ փառաւորապէս առաջնորդուեցաւ կառավա-
րական պաշտօնատունը, ուր ամենասիրելիբ հիւրընկա-
լութիւն եղաւ իրեն, ի ներկայութեան թագաւորին: Պուլ-
կար եւ Սերպ պատերազմին յիշատակները այլ եւս մտ-
ցուած կը համարուին:

Սերպիայ թագաւորը արեւելեան տարեմուտին առթիւ
շնորհաւորական հեռագիրներ փոխանակեց Չարին եւ
Պուլկարիոյ ու Կարաաղի իշխաններուն հետ:

Իսկ Պուրքէշի եւ Սոֆիայի միջև յարաբերութիւնները
չեն լաւանար: Սերպիոյ Սըուրչինային (պատգամաւորա-
կան յաղագր) բացման առթիւ արտասանուած գահա-
ճառը եւ տրուած պատասխանը երբեք ապահովութիւն չեն
ընծայեր պապային համար: Ալեկսանդր թագաւորը պար-
զապէս գործիք մըն է Ռուսիոյ ձեռքերին մէջ:

Ռուսական հովանաւորութեամբ կազմուելու վրայ ե-
զող նիզակակցութիւնը խաղաղութեան պահպանումին
դէմ սպասնալիք մը կը նկատուի: Անշուշտ այդ միա-
բանութիւնը անմիջապէս պիտի չգործէ, այլ մեծ գէպ-
քերու նախընթացը երևան պիտի գայ: Թայմզ, որ Պալ-
քանեան խնդրին մէջ հակառու ոգի երևան կը բերէ,
նման Անգլիոյ միւս թերթերուն, կ'ընդունի թէ Յունաս-
տան, Բուլղարիա եւ Թիւրքիա իրենց զաշնակցութեան մէջ
սերիշ բան չեն փնտոներ բայց եթէ խաղաղութեան պահ-
պանումին ապահովութիւնը:

* *

Ու գէպքերը որոնք կը պատահին Պալքանները, են-
թաղրել կուտան թէ քիչ մը շատ կարեւորութիւն տրուած
է ոուսեւաստրիական համաձայնութեան, որ կ'ենթադրուէր
թէ զոնէ խոսովութիւնները արգիւելու չափ զօրութիւն կ'ու-
նենար:

Մակեդոնական քօմիթէն առ այժմ աւելի զօրեղ կը
թուի քան թէ ոուսեւաստրիական համաձայնութիւնը:
Իշթիպի գէպքը վրդովիչ նշան մըն է: Հեռագիրը արդէն
լուր բերած էր Հիւսիսային Մակեդոնիոյ կողմը պատա-
հած արիւնահեղութեան մը մասին. այժմ յունուար 11
եւ 14 թուականով հեռագիրները աւելի մանրամասնու-
թիւններ կը հազորդեն:

Մակեդոնիան զրգռելու հետամտող պուլկար յեղա-
փոխականներէն հինգ հոգի ամբացած էին Քէօքրիլիի
մօտ իշթիպ գեղը տան մը մէջ, ուրիկ ներս մտնելու ան-

կարող էր տեղական իշխանութիւնը: Իսկիպի վալին կը
փութայ կը հասնի, եւ զիմագրութիւնը շուտով կ'օչնչա-
նայ: Չինուորները կրակ կ'ընեն եւ այրելով կը փրցնեն
թէ այնչառուն ուր կ'ենթադրուէր թէ պուլկարները հա-
ւաքուած էին, եւ թէ անոր կից գտնուող ուրիշ երկու տուն
ալ որոնք զինուորներուն յառաջացմանը կը դիմագրէին:
Հինգ յեղափոխականներէն երկուքը ոպանուելը են, եր-
կուքը բռնուել են, ու մէկն ալ յաջողոր է փախչիլ: Իշ-
թիպ հիմակ զինուորական մնայուն պահականոց մը կը
հաստատուի, ինչ որ բնակիչներուն շատ ախորժելի չէ:
Իսկիպի վալին զեռ մինչև յունուար 11 խոսովութեան
վայրն էր, ու Երլազի հետ շարունակ հեռագրական յա-
րաբերութեան մէջ կը գտնուէր: Գեղը զինուորական շրջ-
թայի ներքև անուած կը մնայ. ոչ ներս մտնելու, ո'չ
յուրս ելլելու արտօնութիւն կայ: Կ'ենթադրուի թէ ահեղ
գէպքեր տեղի ունեցած ըլլալու են:

Յունուար 14ին ալ կը հեռագրուի թէ Իշթիպի դէպ-
քին հեռեանքով թիւրք կառավարութիւնը խուզարկութիւն-
ներ ըրած է պուլկարական սահմանազլխին մօտ պուլկա-
րական Մալէշ գեղը: Ինչպէս Իշթիպ նմանապէս եւ Մալէշ
գէնք եւ ուղղամթերք դտնուել են:

Թիւթերի գործակալութիւնը այս առթիւ Կ. Պոլսէն կը
գրէ թէ «Պոլսոյ Կեղրոնական իշխանութիւնը շատ քիչ
կարեւորութիւն ընծայել կը թուի այս գործին, թէև միև-
նոյն ատեն չեն ծածկեր այն մտահոգութիւնը զոր իրենց
կը պատճառէ Մակեդոնիոյ կացութիւնը, որ հետզհետէ
կը ծանրանայ պուլկար-մակեդոնական գաղտնի գործա-
կաններուն յարաճուն գործունէութեամբը: Յայտնի է թէ
Թիւրքերը բաւական զօրաւոր են ջանջախելու համար
ո՛ր է ապստամբութիւն, բայց վտանգը հոն չէ, այլ ա-
ւելի կը վախցուի Քրիստոնէից դէմ իրաւական մոլեռան-
դութեան պայթումէ մը, որուն գէմը անհելու անկարող
պիտի գտնուին տեղական իշխանութիւնները: Եւ կ'ե-
րևի թէ այս իսկ է Մակեդոնական քօմիթէին կէտ նպա-
տակին, այն յոյսով թէ այսու պիտի կարենան բռնա-
դատել պետութիւնները եւրոպական միջամտութիւն մը
առաջ բերելու:»

Բայց պիտի հասնին իրենց նպատակին, թէ՞ զուր
տեղը զօրաղղ Մակեդոնիոյ վիճակը աւելի պիտի ծան-
րացնեն: Ինչպէս կը տեսնուի, Աւստրիա չուզեր Մակե-
դոնական խնդրի մը ձագուրը, եւ կը հովանաւորէ Թիւրք-
Յոյն-Բուլղան նիզակակցութիւն մը, իբր պատուար ընդ-
դէմ Մակեդոնիոյ: Յայտնի չէ թէ Պուլկարիա, Սերպիա
եւ Գարաաղ ինչ յատակագծով պիտի կրնան միաբանիլ,
բայց ակներև է որ այս երբեակ-նիզակակցութիւնը ուժի
կողմէն չի կրնար մրցիլ միւսին հետ՝ որուն զուրքը Թիւր-
քեան է:

Լոնտոնի մամուլին բերանն աշնայելով, Անգլիա պիտի
հակի Աւստրիոյ եւ Թիւրքիոյ:

Մօրենիկ Բօսք զոհունակութիւն կը յայտնէ որ թիւրք կառավարութիւնը կարող եղած է դաւադրութեան բոյն մը ջնջել և ռազմամթերք գրաւել, առանց արիւնի հոսման: Բայց կացութեան ծանրութիւնը կ'ըմբռնէ: «Մակեդոնիոյ մէջ թիւրք ու Պուլկար քովէ քով կ'ապրին, կ'ըսէ. ու երբ թիւրքերը տեսնեն թէ Պուլկարները կը զինուին, իրենք եւս զէնքի կրնան դիմել, օրէնքն ալ ձեռքերնին ունենալով. ու հետևանքները Արևելեան Եւրոպայի խաղաղութեան վտանգ կը սպառնան»: Ու անշուշտ այդ վրտանքին առջևը առնելու համար է որ արքունական մեծ թերթը կ'զգուշացնէ Անգլիան հաւատք ընծայելու թըրքական վարչապետեանց ու խժգոթութեանց լուրերուն որոնք Մակեդոնիայէն կը հասնին: «Ո՞չ ապաքէն, մենք ալ կերպով մը այդ միևնոյն վիճակին մէջ կը գտնուինք. վասն զի Հարաւային Աֆրիկէի մէջ մեր սպաններն ալ թշնամիին ստախօս գործակալութիւններէն շնորհաբար ստանաւոր իբր արիւննուշտ կոտորածներ ընողներ»: Եւ կը յուսայ թէ անգլիական հասարակութիւնը բաւական առողջամտութիւն պիտի ունենայ չհատալու համար թէ անգլիական սպաններուն, թէ սուլթանին կառավարութեան վերագրուած անգթութիւնները:»

Անգլիական թերթի մը մէջ, և ազնուապետական թերթի մը մէջ, սուլթանին կառավարութեան ու վիկթորիա թագուհիին բանակին անուններուն լծակցութիւնը անշուշտ ապշութիւն մը կը բերէ մեզի: Բայց շնք մոռնար թէ լրբութիւնը զիւանագէտ օրագրութեան կեանքին էական մասը կը կազմէ:

Ռուսական մամուլին մէջ Նովոսթի յառաջդիմական թերթը պելի մարդասիրական միջոց մը կ'առաջարկէ խաղաղութեան պահպանուած պահպանելու համար: Պերլինի դաշնագրին վերաքննութեան խնդիրը կը յուզէ: Նովոսթի կ'ընդունի թէ Եւրոպայի զիւանագէտներուն համար ախորժելի չէ այդ վերաքննութեանը ձեռնարկել, վասն զի ձանձրոյթը մեծ պիտի ըլլայ. բայց շատ աւելի մեծ տագնապներու պիտի ենթարկուին երբ խաղաղութիւնը վաւանգուի, ազէտ մը որ անխուսափելի կը թուի եթէ Մակեդոնիան այս վիճակին մէջ պահուի: Պերլինի դաշնագիրը չի կրցաւ բարուցել Մակեդոնիոյ կացութիւնը որեմն վերաքննութեան պէտքը զգալի է:

Մենք ալ ըզմանք որ այս գաղափարը ծաւալի, ընդունելութիւն գտնէ: Հայաստան առաջուրնէ շատ արլի դժոյղակ կացութեան մատնուեցաւ Պերլինի դաշնագրէն յետոյ: Մեր երկիրը Մակեդոնիայէն շատ աւելի կը տառապի: Ու մենք ալ այնքան իրաւունք ունինք որքան Մակեդոնիան այդ 61 յօդուածին բարեփոխուած պահանջելու: Ինչպէս Մակեդոնականը նոյն և Հայկական հարցը ալ եւս միջազգային խնդիրներուն կարգն է, Պերլինի վեհաժողովին պաշտօնական վճռագրովը: Ուշ կամ կանուխ այդ վճռագիրը պիտի գործադրուի. եւ արդէն բաւական ժամանակ անցաւ: Ու ամէն տարի որ կ'անցնի,

մեզի ղեպի բարեփոխումի թուականին կը մօտեցնէ: Մակեդոնիոյ խնդիրը հաւանօրէն փութացնէ Պերլինի միջազգային դաշնագրին վերաքննութեան խնդիրը:

ՌԻՍՏՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ուստր գումարուած Համաժողովի մասին մեր հարգած նախորդ տեղեկութեանց վրայ կ'աւելցնենք հետեւեալներն եւս:

Դեկտեմբեր 22 շաբաթ իրիկուան ժամը Տին Հնչակեան Կուսակցութեան Նահանգային Վարչութեան զիւանդ Պարոնայք Սահակ Յովսէփեան (ատենապետ) և Կիրակոս Մինասեան (ատենադպիր) բեմ բարձրացան: Պ. Ատենապետը հրաւեր կարգաց բոլոր պատգամաւորներուն ներկայացնել իրենց պաշտօնագրերը արձանագրելու համար: Տեսնուեցաւ թէ տասնըհինգ քաղաք և երկու ազգային թերթ զոկած են իրենց ներկայացուցիչները որոնց ցանկը հետեւալն է:

- Ուստր. Մարտիրոս Նահիկեան, Կիրակոս Սանթոնեան, Ալեքսան Գազանճեան:
- Բրովիտէնս. Ղեւոնդ Վ. Մարգուկէսեան, Մարտիրոս Պաղտիկեան, Ասատուր Կոստանեան:
- Պոստոն. Գառնիկ Քալէմէքեան, Կարապետ Քարակիւղեան, Գրիգոր Թաշճեան:
- Լօրէնս. Տօքթօր Ս. Ճէլայեան, Պետրոս Եզօեան:
- Լօուէլ. Տօքթօր Գազանճեան, Գէորգ Պապիկեան:
- Նիւ-Եորք. Գէորգ Տէր-Ստեփանեան:
- Մօլտան. Արամ Մեծատուրեան, Գէորգ Արապեան:
- Սերինկֆիլտի ռուսնոյք. Արամ Զարգարեան, Գրիգոր Ապտիեան,
- Միլֆորդ. Ղազարոս Պաղտասարեան, Ս. Արսլանեան:
- Ֆիլպրիկ. Արսէն Վ. Վեհունի:
- Նիուպլըրիբօրդ. Պողոս Գուլումճեան:
- Իսզ Ուոդր Դաուն. Նազարէթ Թէրզեան:
- Հալթհիլ. Անդրանիկ Կարապետեան:
- Պրիմուօզըր. Ս. Փանեան:
- Իսզ Ուէլմր. Գ. Կ. Տէօքմէճեան և «Չայն Հայրենեաց». Գարեգին Զիթճեան:
- «Կոչնակ». Միքայէլ Մինասեան:
- Հնչակեան Կուսակցութիւն. Սահակ Յովսէփեան, Կիրակոս Մինասեան, Միքայէլ Յովհաննէսեան, Կարապետ Փափազեան, Սուրէն Սուրենեան:
- Մասնաւոր հրաւիրեալ. Խօսք Վ. Մարգարեան:
- Հնչակեան Կուսակցութեան Նահանգային Վարչու-

Թեան զիւանը նախ իւրաքանչիւր պատգամաւորի անունը տալով հրաւիրեց իրենց աթոռները առնել: Յետ որոյ առժամեայ Դիւանը իր պաշտօնը վերջացած յայտարարելով ժողովը միաձայնութեամբ Արսէն վ. Վեհունին հրաւիրեց նախագահել եւ կազմել զիւանը:

Նախորդ թուով կազմութիւնը ծանուցած ենք: Միանգամայն թէ նոյն թուով և թէ այս ֆիւլին երկրորդ յօգուածով ժողովին ամէն գործին վրայ վրայ խօսած ըլլալով կրկնութեան պէտք չենք տեսներ: Ժողովը ի միջի այլոց որոշած է որ համակրանքի նամակ մը գրուի Բարիզի «Բրօ Արմէնիա» ֆրանսերէն թերթին խմբագրութեան: Միանգամայն արտօնած է մնայուն յանձնախումբը դրամական նպաստ մը փութացնել յիշեալ թերթին: Մնայուն յանձնախումբին պաշտօնը պիտի տեսնուի առ առաւելն վեց ամիս: Շրջանին լրմանը մօտերը յանձնախումբը երկրորդ պատգամաւորական Համաժողովը պիտի գումարէ իր յարմար դատած վայրը:

ՍՐԱՄԻՏ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԸ

Հայերը և Յոյները այս տարի Պոլիս թերեւ թնդանօթի որոտութենով տօնեն Մնունդը որ, «Աստուած մեզք չհամարի»— Ինչպէս կ'ըսէին մեր հայրերը, մահմետականներու պայրամին հետ միևնոյն օրերը կը զուգահիւ պի, եթէ լուսինը կամենայ, կամ թէ՛ երկտղի քաղաքականութիւնը լուսինը իր հրամաններուն ներքև պահելու որոշում չի տայ. ենթադրութիւն մը որ անհաւանական չէ: Մահմետականները կը վախնան թէ մեր մէկ տօնը իրենց պայրամին օրերուն հանդիպելով թնգանօթներու արձակման փառատութեամբ գուցէ պատուած կ'ըլլան քրիստոնէութիւնը, որով Անհաւատարութեան օրէնքը կը հարուածի:

Երբ 1896ին ամառը Մուրատ պէյ Բարիզ կը բանակցէր մեզի հետ համաձայնութեան մը պայմաններուն վրայ, նոր չէնքին հիմ կը զնէր Գրիստոնէից եւ Մահմետականներուն միջև Հաւատարութեան սկզբունքը:

— Անհնարին է որ դուք մահմետականներդ, յայտարարեցի իրեն, մեզի Գրիստոնէիցս հետ հաւատարութեան սկզբունքը երբեք լիովին ընդունիք:

Չարմացաւ, կամ զարմանալ ձեւացուց թերեհաւատութեանս վրայ:

— Չեր պայրամին թնդանօթ կ'արձակէք, մեր Չատկին ալ պիտի արձակուի՞, հարցուցի:

Լռեց, և օկոսաւ ժպտիլ:

Այս տարուան զուգահիւսութիւնը միտքս կը ձգէ ու

րիչ զուգահիւսութեան մը աւանդակէպը որ մեր հինբուսն յիշատակին մէջ պահուած կը մնար զեռ քսան երեսուն տարի առաջ, ու իր պարզութեանը մէջ կը ցուցնէ Գրիստոնէից եւ մահմետականներու խույ մաքսնութիւնը, իրարու հակառակող ձգտութիւնը, բարքերու խորին տարբերութիւնները:

Ճիշտ չեմ գիտեր թէ որ Պատրիարքին օրովն էր, բայց աւանդութիւնը հին Պողոս պատրիարքին անունը կը յիշէ, պայրամը մեր Չատկին կիրակիին կը զուգահիւսի: Սատրագամը երկու երեք օր առաջ Պատրիարքը կը հրաւիրէ, և հետեւեալ խօսակցութիւնը կ'անցնի մէջերնին:

Սատրագամը. — Պարթիք էֆէնտի, աս տարի մեր պայրամը ու ձեր Չատկիլը մէկ օր կուզան. մենք բօքեր պիտի նետենք, ուստի պէտք է որ դուք Չատկինի պերկուշարթի օրուան ձգէք:

Պատրիարքը. — Ինչպէս կարելի է. մեր կրօնքին հակառակ է տօն մը իրեն սահմանուած օրէն ուրիշ օրուան մը յետաձգել:

Սատրագամը. — Պիտի յետաձգէք:

Պատրիարքը. — Աման էֆէնտի, անհնարին է:

Սատրագամը. — Ինչ, Տէօվլէթը Ալիյէն Բայաններուն առջև ինքը պիտի խոնարհի: Մենք ձեր Չատկին բօք չենք կրնար նետել, դուք պէտք է տեղի տաք:

Մտմտուցը կ'առնէ Պատրիարքը. բայց խորին սէրը զոր ունէր իր եկեղեցիին համար հրաշալի գաղափար մը կը ներշնչէ իրեն.

— Էֆէնտի, կ'ըսէ, կրօնական շատ ծանր խնդիր մը ըլլալով ասիկայ, եթէ կը հաճիք անոր լուծումը պատիկ տղաքները՝ խելքին ձգենք:

Սատրագամը չի կրնար զուշակել թէ Պատրիարքը ինչ ըսել կուզէ, ու այս տարօրինակ առաջարկը իր հետաքրքրութիւնը շարժելով,

— Շատ ազկ, կ'ըսէ, նայի՛մ ինչ պիտի ընես:

— Հրամայեցէք ուրեմն որ հինգ տասը իսլամ տղաքներ ժողովն փողօցէն ու հոս բերեն:

Սատրագամը հարկ եղած հրամանները կուտայ: Միևնոյն ատեն Պատրիարքն ալ իր եասօխճիին կը հրամայէ որ շուտով քանի մը հայ տղաքներ ժողովն բերեն:

Քիչ ետքը փողօցներէն հաւաքուած տասը տասերկու տարեկան հայ ու մահմետական տղաքներու երկու խումբ զողղզահար կը ներկայանան սատրագամին ու պատրիարքին առջև:

— Պարթիք էֆէնտի, նայինք ինչ պիտի ընես, կ'ըսէ սատրագամը, որուն հետաքրքրութիւնը զգաթնակէտին հասած է:

Պատրիարքը հայ տղոցմէն մէկը կը կանչէ առաջ, և թրքեվար կը հարցնէ,

— Ծօ՛ տղայ, Չատկիլը ե՞րբ է:

— Կիրակի օրը, սրբազան, կը պատասխանէ տղան համարձակօրէն:

— Երկուշաբթի ընենք նէ չ'ըլլա՞ր.
 — Կիրակի, սրբազան, կը կրկնէ տղան:
 — Բայց աղաս, Սատրազամ էֆէնտին կը հրամայէ որ երկուշաբթի ընենք Չատիկը:

— Կիրակի, սրբազան, կը պնդէ տղան անայլալ ձայնով, բայց զարմացման ու զայրացման շեշտով:

Պատրիարքը աս տղան ետ կը դարձնէ խօսմբին մէջ, և ուրիշ մը կը կանչէ: Անոր ալ միենոյն հարցումները կը կրկնէ, եւ ճիշտ ու ճիշտ միենոյն պատասխանները կը լսէ: Եւ կը շարունակէ այսպէս, մինչեւ որ բոլոր տղաներն ալ առանց ո՛ր և է վարանուծի ուրիշ բան չեն ըսեր բայց եթէ «Կիրակի»:

— Հիմակ, կ'ըսէ պատրիարքը սատրազամին, կը խնդրեմ որ հաճիք դուք ալ միենոյն հարցումը իսլամ տղոցը ընել:

Սատրազամը անօնցմէ մէկը առջ կը կանչէ:

— Օլա՛ն, պայրամը ո՞ր օրն է:

Մահմեդական տղան գետնէն խօնարհաբար բարեւատրով կը պատասխանէ.

— Էմը էֆէնտիմիզին (հրամանը մեր տիրոջն է):

— Օլա՛ն, կիրակի օրն է:

— Էմը էֆէնտիմիզին:

— Օլա՛ն, երկուշաբթի ընենք նէ չ'ըլլա՞ր:

— Էմը էֆէնտիմիզին:

Սատրազամը բոլոր աղաներուն մէկիկ մէկիկ այս հարցումները կ'ուղղէ, և ամէնէն ալ «էմը էֆէնտիմիզին» էն զատ ուրիշ պատասխան չ'առնելու: Տղաքը կը ծամբուին: Պատրիարքը սատրազամին կը յայտարարէ թէ.

— Ահա տեսաք որ ես պզտիկ տղոցը իսկ խօսք չեմ կրնար հասկցնել. ինչ որ ըսեմ «կիրակի» կը պատասպանեն: Հապա մեծերո՞ն ինչ ըսեմ: Իսկ ձեր տղաքը ձեր հրամանին կ'օպատեն: Լուրը տղոցմէն ա՛ն ըսուած է. ուրեմն ձեր մեծերն ալ ձեր հրամանին կ'օպատեն:

Սատրազամը կը յաղթուի այս սրամտութենէն, և կը հրամայէ որ լուսինը փոխանակ կիրակիի երկուշաբթի նօրնայ:

Կրնանք ենթադրել որ եթէ հիմակ սուլթանը Օրմանեանը կանչէր եւ հրամայէր որ Ծնունդը փոխանակ յունուար Եին տօնելու տասնին տօնենք, «էմը էֆէնտիմիզին» ըսելով զօրս պիտի ելլէր:

ԼՈՒՐԵՐ

ՔՐԴԱԿԱՆ Ճաֆ ցեղը, Մահմուտ փաշա մը իրեն գլուխ ունենալով Թիարքիայէն Պարսկաստանի սահմանքները արշաւած է, եւ բազմաթիւ գեղերու վրայ յարձակելով զանոնք սկսած է բալլել: Կ. Պոլսէն յունուար 11ին կը հեռագրուի որ աշարատարիւնը դեռ միեւնայն օրը կը շարունակուէր: Պարսկական դեսպանը Դրան բողոքագիր ներկայացոցեր է:

ՌՈՒՍԻԱ եւ **ԹԻՒՐԿԻԱ**. Պատերազմական տոգանքին ի հաշիւ Թիարքիա 350,000 ոսկի ամբողջաւ պէս վճարեց Ռուսիոյ:

ՅՈՅՆ ՄԱՄՈՒԼԸ. Պ. Միհրան Սըվազը հանգոցեալ Տիգրան Երկարի «Թիարքիոյ ապագան» քաղաքական տեսութեանը, որ «Ռուվիս տե օրվիս» ի մէջ տրպագրուելով շատ ուշադրութեան գրասած էր քաղաքական աշխարհէն, յունարեւի բարգմանելով հրատարակեց յոյն մամուլին մէջ:

ԵՐԻՏՐՈՍԱՐԻ ԹԻՒՐԿԻՆԸ շրջաբերականներ հանելով դեսպանատններուն կը ծանուցանեն թէ ստորանին գահընկէցութեան օրերը մօտեցած են: Պոլիս կարևորութեան չեն իտար այս գրութեանց:

ՃԱՍՏԷ ԵՒ ԲԱՃՆԵՒԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ՝

L. FRANK,
 27, CHESTERTON ROAD,

(ENGLAND) LONDON, W!